

Մշակութային ժառանգության կառավարման պլան  
«Այգ-1» ՖՎ կայանի նախագիծ  
Հայաստանի Հանրապետություն



2023թ. հոկտեմբեր

## Որակի վերահսկում

Թողարկում/Փոփոխություն	Առաջին թողարկում	Երկրորդ թողարկում
Ամսաթիվ	2023/10/04	2023/10/30
Կազմվել է	Մայքլ Թոմիսկ	Մայքլ Թոմիսկ
Ստորագրություն	<i>M. A. Tomisak</i>	<i>M. A. Tomisak</i>
Ստուգվել է	Շառլ Լե Քեն	Շառլ Լե Քեն
Ստորագրություն	<i>[Signature]</i>	<i>[Signature]</i>
Նախագծի համար	QH1010	QH1010
Ֆայլի հղում	QUERCUS HERITAGE LTD (TBC)\QH1010_Masdar-PV - Documents\04_Reports\CHMP \Cultural Heritage Management Plan_2023_10_04	QUERCUS HERITAGE LTD (TBC)\QH1010_Masdar-PV - Documents\04_Reports\CHMP \Cultural Heritage Management Plan_2023_10_24

## Բովանդակություն

1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	1
1.1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	1
1.1.1	Նպատակը .....	1
1.1.2	Գործողությունների շրջանակը .....	1
1.2	Նպատակները .....	4
1.3	Սկզբունքներ .....	4
1.4	Համատեքստ եվ մոտեցում .....	4
2	Օրենսդրական պահանջներ եվ ուղեցույցներ .....	6
2.1	Իրավական պահանջներ. ընդհանուր տեղեկություններ .....	6
2.1.1	Հայաստանի Հանրապետություն (ՀՀ). Օրենքներ և նորմատիվ ակտեր .....	7
2.1.2	Պահպանվող օբյեկտի կարգավիճակ .....	7
2.1.3	Կառուցապատման վերահսկման միջոցներ .....	9
2.1.4	Բուժերային գոտիներ .....	10
2.1.5	Արխիվացում և տեղեկատվության պահպանում .....	10
2.2	Միջազգային ֆինանսական չափանիշներ .....	11
2.2.1	ՎՉԵԲ-ի Կատարողական պահանջ 8 (ԿՊՑ) .....	11
2.3	Մասնագիտական ուղեցույցներ .....	12
2.3.1	Տարածաշրջանային նախադեպեր .....	13
2.4	Ուսումնասիրվող տարածքի սահմաններում օբյեկտների իրավական հիմքերով պահպանությունը .....	13
2.4.1	Օրենքով պահպանվող/հատուկ պահպանվող հուշարձաններ .....	13
2.4.2	Հատուկ պահպանվող օբյեկտների ցանկում չընդգրկված («չառանձնացված») մշակութային ժառանգության հուշարձաններ/հնավայրեր .....	13
3	Գործառույթներ եվ պարտականություններ .....	16
3.1	Ընդհանուր տեղեկություններ .....	16
3.2	Ընկերության դերն ու պարտականությունները .....	17
3.3	ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ .....	19
3.3.1	ՏԿԵՆ .....	19
3.3.2	Մշակույթի նախարարություն .....	19
3.3.3	Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն .....	19
3.4	Մշակութային ժառանգության հարցերի ավագ պատասխանատու .....	20
3.5	Կապալառուի դերն ու պարտականությունները .....	20
3.6	ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐ .....	24
3.6.1	Դաշտային աշխատանքներ կատարող կապալառուներ .....	24
3.7	ԱԹՍ լուսանկարահանող/մոդելավորող կապալառուներ .....	25

3.8	Միջազգային ֆինանսական հաստատություններ (մֆհ) .....	25
4	ԵԼԱՎԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱԿԻՐՏ ԵՎ ԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	27
4.1	Ֆիզիկական մշակութային ժառանգություն .....	27
4.1.1	Տեղամաս 1 .....	31
4.1.2	Տեղամաս 2 .....	32
4.1.3	Տեղամաս 3 .....	33
4.1.4	Տեղամաս 4 .....	34
4.1.5	Տեղամաս 5 .....	35
4.1.6	Տեղամաս 6 .....	36
4.2	Ոչ նյութական ժառանգություն .....	36
5	Մեղմացման միջոցառումների իրականացում .....	37
5.1	Ազդեցությունների ամփոփում .....	37
5.1.1	Ազդեցություններն ըստ տեղամասի .....	37
5.1.2	Ծրագրի ազդեցության գոտուց դուրս գտնվող օբյեկտներ .....	38
5.1.3	Ուսումնասիրվող տարածքից դուրս գտնվող օբյեկտները .....	39
5.1.4	Ոչ նյութական .....	42
5.2	Միևչեվ շինարարությունն իրականացվող գործողություններ .....	42
5.2.1	Գնահատում (նախքան շինարարությունը) .....	43
5.2.2	Մեղմացման միջոցառումներ .....	44
5.2.3	Վերգետնյա/կառուցված ժառանգություն (նախքան շինարարությունը) .....	44
5.2.4	Թաղված (ստորգետնյա) հնագիտական օբյեկտներ (նախքան շինարարությունը) .....	44
5.2.5	Ոչ նյութական ժառանգություն .....	48
5.3	Մեղմացման միջոցառումներ շինարարության ընթացքում .....	49
5.3.1	Թաղված (ստորգետնյա) հնագիտական օբյեկտներ (շինարարության ընթացքում) .....	49
5.3.2	Վերգետնյա/կառուցված ժառանգություն (շինարարության ընթացքում) .....	50
5.3.3	Նախագծի փոփոխություններ .....	51
5.3.4	Պահանջների ամփոփում .....	58
5.4	Շինարարությունից հետո ներկայացվող պահանջներ .....	58
5.4.1	Գնահատման աշխատանքներ հետազոտություններից հետո .....	58
5.4.2	Գիտական վերլուծություն .....	59
5.4.3	Հրապարակում և տարածում .....	59
5.4.4	Արխիվներ, պահպանում և տիրապետում .....	60
5.5	Պատահական գտածոների կառավարման ընթացակարգ .....	60
5.6	Մշակութային ժառանգության իրազեկման գործընթաց .....	63

5.7 Հաշվետվությունների ներկայացում ..... 64

5.8 Աշխարհատարածական տվյալների կառավարում ..... 65

5.9 Լրացուցիչ ծրագրային պարտավորություններ ..... 66

5.9.1 Ազդեցությունների թարմացված գնահատում ..... 66

5.9.2 Արտեֆակտների պահպանում ..... 66

5.9.3 Տեղեկատվության փոխանցում և արխիվացում ..... 66

5.9.4 Ընթացիկ մասնակցություն ..... 66

6 Հավելվածներ ..... 68

Հավելված 1. Տեղեկագիր ..... 69

Հավելված 2 . Մեղմացման միջոցառումների ընդհանուր քարտեզ ..... 70

Հավելված 3 . Օբյեկտին բնորոշ մեղմացման միջոցառումների մանրամասն քարտեզներ ..... 71

**Բացատրական բառարան**

Հապավում	Անվանում	Նկարագրություն
ՀՀՀ	Հնագիտական հետազոտության հաշվետվություն	«Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամի և «Cortes Arqueologia» ընկերության կողմից 2021-2022թթ իրականացված հնագիտական հետազոտությունների հաշվետվություն:
ՄԺՊ	Մշակութային ժառանգության հարցերի պատասխանատու	Ոչ հնագիտական նպատակներով իրականացվող ցանկացած գործունեության ընթացքում դիտարկման և ուսումնասիրության ծրագիր իրականացնող՝ մշակութային ժառանգության/ հնագիտության ոլորտի համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:
ՄԺԿՊ	Մշակութային ժառանգության կառավարման պլան	Որևէ գործունեությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո տվյալ գործունեության տարածքում մշակութային ժառանգությունը կառավարելու և պաշտպանելու նպատակով ձեռնարկվելիք միջոցառումները սահմանող ծրագիր:
ՎՁԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	ՎՁԵԲ-ը միջազգային ֆինանսական հաստատություն է: Հանդիսանալով բազմակողմ զարգացման ներդրումային բանկ՝ ՎՁԵԲ-ը ներդրումներն օգտագործում է որպես շուկայական տնտեսություն կառուցելու գործիք:
ՆԳՇ	Նախագծում, գնումներ և շինարարություն	ՆԳՇ պայմանագրերը (ավարտուն պայմանագրի տեսակ) կապալի պայմանագրի ձև են, որոնք օգտագործվում են մասնավորի կողմից խոշոր և բարդ ենթակառուցվածքային նախագծերի շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Օբյեկտն ամբողջությամբ հանձնելուց բացի, կապալառուն պետք է այդ օբյեկտը հանձնի երաշխավորված գնով մինչև սահմանված ժամկետը և աշխատանքներն իրականացնի սահմանված մակարդակով:

ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա	Համաշխարհային բանկի խմբի անդամ հանդիսացող ՄՖԿ-ն նպաստում է տնտեսական զարգացմանը և բարելավում մարդկանց կյանքը՝ խթանելով զարգացող երկրներում մասնավոր հատվածի զարգացումը:
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն	Ընդհանուր տերմին, որն օգտագործվում է որպես նախագծի վարկատու կամ ֆինանսավորող հանդիսացող հաստատությունների համար:
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը:
ԿՊ/ԿԶ	Կատարողական պահանջներ/չափանիշներ	Պահանջներ կամ չափորոշիչներ, որոնք մշակվել են կոնկրետ բանկերի կամ հիմնադրամների կողմից աջակցություն ստացող զարգացման ծրագրերին մշակութային ժառանգության պահպանության նվազագույն պահանջներ ներկայացնելու նպատակով:
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն	Հայաստանը, որը պաշտոնապես կոչվում է «Հայաստանի Հանրապետություն», Արևմտյան Ասիայում՝ Հայկական լեռնաշխարհում գտնվող երկիր է և Կովկասյան տարածաշրջանի մաս է կազմում:
ԱԹՍ	Անօդաչու թռչող սարք	Օդային պատկերներ ստանալու համար նախատեսված դրոն:

# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

---

## 1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1.1.1 Նպատակը

Մշակութային ժառանգության կառավարման սույն պլանը (ՄԺԿՊ) կազմվել է Հայաստանում «Այգ-1» ֆոտովոլտային կայանի նախագծի համար՝ «Մասդար Արմենիա» ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) պատվերով: Պլանի նպատակն է սահմանել ծրագրի ազդակիր մշակութային ժառանգության կառավարման և փաստաթղթավորման ընթացակարգերը՝ համաձայն 2023 թվականի վերջին հրապարակվող ԲՍԱԳ-ում<sup>1</sup> սահմանված առաջարկությունների: Փաստաթուղթը պատրաստվել է ՀՀ օրենսդրությանը և միջազգային ֆինանսական չափանիշներին, այդ թվում՝ ՎՁԵԲ-ի՝ մշակութային ժառանգությանը վերաբերող չափանիշին, Կատարողական պահանջ 8-ին (ԿՊ 8) համապատասխան:

Նախագիծը նախատեսում է 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում (այսուհետ՝ «Այգ-1» կամ «Ծրագիր») ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների միջև ընկած տարածքում և զբաղեցնելու է 525 հեկտար հողատարածք (տե՛ս **Նկար 1**):

Ծրագրի տարածքը գտնվում է Թալինի սարահարթում, որը փոկած է Արագած լեռան հարավ-արևմտյան կողմում: Տարածքի պատմամշակութային լանդշաֆտը շատ հարուստ է մեծ հասած ժառանգությամբ և հնավայրերով, ներառյալ որսման և թակարդման համակարգերի («որսադարաններ») բազմաթիվ ապացույցներով:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է (ՏԿԵՆ) <sup>2</sup>: Այն գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը: «Այգ-1» ՖՎ կայանի կառուցման նպատակով Ընկերության և Նախարարության միջև ստորագրվել է Կառավարության աջակցության համաձայնագիր:

### 1.1.2 Գործողությունների շրջանակը

Սույն պլանի գործողությունների շրջանակը ներառում այն ընթացակարգերի ու նորմերի սահմանումը, որոնք Ծրագիրը պահպանում է մինչ-շինարարական, շինարարության և շահագործման փուլերում: Հաշվի առնելով ազդեցության գնահատումը (ներառյալ առանձնացված մեղմացման առաջարկությունները) և վերջերս կատարված կրկնակի նախագծումը (2023թ. օգոստոսի դրությամբ)՝ ՄԺԿՊ-ն արձանագրում է ժառանգության հայտնի օբյեկտները, որոնք ազդեցություն կկրեն Ծրագրի շինարարության ժամանակ, և սահմանում այդ օբյեկտների, ինչպես նաև հնարավոր հանդիպող այլ օբյեկտների վրա

---

<sup>1</sup> ԲՍԱԳ, 2023թ. սեպտեմբեր, Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման հաշվետվություն, «Այգ-1» 200 ՄՎտ ՖՎ կայան, Հայաստան, Alvis ESG Consulting (կազմվել է Աբու Դաբիի «Future Energy» (Մասդար) ընկերության և ՎՁԵԲ-ի համար)

<sup>2</sup> ՏԿԵՆ, ՀՀ կառավարություն [www.gov.am](http://www.gov.am)



կապալառուի ազդեցությունների նվազեցմանը կամ մեղմացմանն ուղղված համապատասխան միջոցառումները:

ՄԺԿՊ-ով սահմանվում են նաև մշակութային ժառանգության և հնավայրերի կառավարման գործում ներգրավված տարբեր կողմերի դերն ու պարտականությունները:

Սույն կառավարման պլանի կազմման պահին (2023թ. օգոստոս) շինարարական որևէ աշխատանք չի իրականացվել:



Նկար 1. Ծրագրի հատակագիծը



## 1.2 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՄԺԿՊ-ի ընդհանուր նպատակն է գործող օրենսդրության և այլ պարտավորությունների համաձայն հստակ սահմանել Ծրագրի շինարարության ընթացքում մշակութային ժառանգության ընդհանուր կառավարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները՝ ի շահ Ծրագրի շահառուների և կապալառուների:

Սույն փաստաթղթի հիմնական կոնկրետ նպատակները հետևյալն են՝

- Ապահովել հստակ փաստաթղթավորված պատկերացում Ծրագրի տեղամասի սահմաններում մշակութային ժառանգության օբյեկտների և տարրերի և յուրաքանչյուր օբյեկտի համար նախատեսված մեղմացման միջոցառումների մասին.
- Մշակել ԲՍԱԳ-ով պահանջվող և այդտեղ նշված փուլային ռազմավարություն և ապահովել դրանց իրականացումը ցանկացած թերությունների հայտնաբերման դեպքում.
- Սահմանել տվյալ օբյեկտին բնորոշ գործողությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել.
- Սահմանել շինարարության հնագիտական մոնիթորինգի հստակ ընթացակարգ.
- Սահմանել ոչ նյութական ժառանգության (օրինակ՝ տեղամասում որևէ խաչքարի (հուշարձան, այլ ոչ թե գերեզման) հետ կապված մի տարր) վրա ազդեցությունների վերացման համար անհրաժեշտ միջոցառումները:

## 1.3 ՍԿԶԲՈՒՔՆԵՐ

Սույն ՄԺԿՊ-ն կազմվել է ՀՀ օրենսդրությանը, միջազգային պայմանագրերին և կոնվենցիաներին, ինչպես նաև համապատասխան միջազգային ֆինանսական չափանիշներին համապատասխան՝ հատուկ հղում կատարելով ՎՉԵԲ-ի ԿՊ 8-ին (2019թ.)<sup>3</sup>: ԿՊ 8-ը պահանջում է միջազգային առաջատար փորձի կիրառում մշակութային ժառանգության օբյեկտների փաստաթղթավորման և հեռացման հարցերին անդրադառնալիս:

## 1.4 ՀԱՄԱՏԵՔՍ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄ

Սույն ՄԺԿՊ-ում ընդունված մոտեցումը մշակվել է մշակութային ժառանգության գնահատման համատեքստում, որը ընդունվել և ամփոփ ներկայացվել է 2023թ. սեպտեմբերին հրապարակված ԲՍԱԳ-ի 19-րդ բաժնում (էջ 320) (և մանրամասն ներկայացվել Հավելված 6-ում)<sup>4</sup>: Հետևելով «մեղմացման միջոցառումների հիերարխիային», ինչպես սահմանված է ՎՉԵԲ-ի ուղեցույցում, նախապատվությունը եղել է i) խուսափել ազդեցությունից նախագծման միջոցով, ii) նվազագույնի հասցնել ազդեցությունը (օրինակ՝ տեղափոխելով/հարմարեցնելով ՖՎ վահանակների հենարանները), iii) ստուգել և արձանագրել ժառանգության օբյեկտի ազդեցության ենթարկված մասը, և iv) ամբողջությամբ փաստագրել ազդակիր մշակութային ժառանգության օբյեկտները՝ կիրառելով առաջատար փորձը:

Այս համատեքստում, ինչպես մանրամասն նկարագրվում է ԲՍԱԳ-ում, ՄԺԿՊ մոտեցումը կարելի է բաժանել չորս փուլերի՝

- Փուլ 1. Մինչ շինարարությունն իրականացվող աշխատանքներ.
  - Մշակութային ժառանգության համապատասխան բոլոր օբյեկտների գծանշում/ցուցանակների տեղադրում և բուժերային գոտիների սահմանում,
  - Գնահատման մեթոդներով արձանագրում. այն հատվածներում, որտեղ հնագիտական օբյեկտների վնասումն անխուսափելի է, պետք է իրականացվեն

<sup>3</sup> ՎՉԵԲ, 2019թ. ապրիլ, [Կատարողական պահանջ 8](#)

<sup>4</sup> Ներառված է ԲՍԱԳ-ի Հավելված 2 (F)-ում (2023թ. սեպտեմբեր)

հնագիտական գնահատում և հնարավոր պեղումներ, որի արդյունքում կկազմվեն գիտական հաշվետվություններ, իսկ արտեֆակտները կպահվեն թանգարաններում,

- Անօդաչու սարքի միջոցով օբյեկտի լուսանկարահանման/ֆոտոգրամետրիայի միջոցով արձանագրում, իսկ առավել խոցելի օբյեկտների դեպքում՝ բարձր լուծաչափով օդային և ցամաքային լուսանկարահանում
- Փուլ 2. Շինարարական աշխատանքների ընթացքում
  - Աշխատանքների վերահսկողությունը ընկերության պատասխանատուներին թույլ կտա իմանալ այն ընթացակարգերի մասին, որոնց անհրաժեշտ է հետևել ԲՍԱԳ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների, ՄԺԿՊ-ի և Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի համաձայն
  - Պատահական գտածոների կառավարման ընթացակարգ. կոնկրետ տարածքներում շինարարական աշխատանքների ընթացքում պետք է ներկա լինեն մշակութային ժառանգության օբյեկտների մշտադիտարկող մասնագետներ, որոնք կկենտրոնանան բացահայտված առավել խոցելի տարածքների վրա
- Փուլ 3. Շահագործման աշխատանքների ընթացքում
- Փուլ 4. Հաշվետվությունների ներկայացում (աշխատանքի արդյունքների տարածում ինչպես մասնագետների, այնպես էլ լայն լսարանի շրջանում):

Մշակութային ժառանգության, գծանշումների/ցուցանակների տեղադրման և Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի ներդրման հետ կապված՝ կապալառուներին ներկայացվող պահանջները պետք է ներառվեն Ծրագրի Բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ): Սա նույնպես մանրամասն նկարագրված է սույն ՄԺԿՊ-ի համապատասխանաբար **Error! Reference source not found.** (Մեղմման միջոցառումներ) և 5.3.4-րդ (Պատահական գտածոների կառավարման ընթացակարգ) բաժիններում:

Հնագիտական խոցելի վայրերի գնահատման նպատակով ներկայացվող մանրամասն տեղեկությունները և աշխատանքների պլանավորումը թույլ կտան ապահովել մշակութային ժառանգության կառավարման ոլորտում որակավորված մշտադիտարկող մասնագետների (վերահսկիչների) ներկայությունը շինարարության ընթացքում և հնագիտական մագորդների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների սահմանում:

## 2 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ ԵՎ ՈՒՐԵՑՈՒՅՑՆԵՐ

---

### 2.1 ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներով և նորմատիվ պահանջներով, ինչպես նաև սույն ՄԺԿ-ում մանրամասն նկարագրված պահանջներին և միջոցառումներին վերաբերող այլ նորմերով և տեխնիկական ուղեցույցներով: Այն դեպքում, երբ բացահայտված նորմերից երկուսը կամ ավելին անհամատեղելի են կամ հակասական են, ապա Ծրագրի շրջանակներում կընդունվի ավելի խիստը:

Բոլոր կապալառուներից պահանջվում է պահպանել ազգային կարգավորող բոլոր համապատասխան պահանջները: Թեև կապալառուները պարտավոր են ինքնուրույն ստուգել վերջին կարգավորող պահանջները, այնուամենայնիվ, այս բաժնում ներկայացված է մշակութային ժառանգության հետ կապված Հայաստանի ազգային օրենսդրության պահանջների ցանկը:

Մշակութային ժառանգությանը վերաբերող օրենսդրական պահանջները լայնորեն կիրառվում են ՀՀ կառավարության երեք հիմնական սուբյեկտների կողմից (վերևից ներքև)<sup>5</sup>.

- 1) ՀՀ կառավարություն. ապահովում է մշակութային ժառանգության պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը,
- 2) ՀՀ մշակույթի նախարարություն. մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմինն է, որը մշակում և իրականացնում է ՀՀ պետական քաղաքականությունը և հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և սահմանում դրանց պահպանման ռեժիմը: Այն վերահսկում է մի շարք առանձին մարմինների/վարչությունների, այդ թվում՝ Ծրագրին առնչվող մարմինների աշխատանքը,
- 3) Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն. որը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պահպանվող պատմամշակութային օբյեկտների պետական հաշվառումը, պահպանումն ու օգտագործումը:

---

<sup>5</sup> Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Բաժին 3. **Error! Reference source not found.**

### 2.1.1 Հայաստանի Հանրապետություն (ՀՀ). Օրենքներ և նորմատիվ ակտեր

ՀՀ սահմանադրության համաձայն՝ պատմության և մշակույթի հուշարձանները և մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո: Հայաստանում պատմամշակութային ժառանգության պահպանության ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են մի շարք օրենքներով, այլ իրավական ակտերով և միջազգային կոնվենցիաներով:

Մշակութային ժառանգությանը վերաբերող և սույն կառավարման պլանին առնչվող հիմնական օրենքների թվում են՝

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (ընդունված 1998թ. նոյեմբերի 11-ին)
- «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք (ընդունված 2002թ. նոյեմբերի 20-ին)
- «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք (ընդունված 2009թ. հոկտեմբերի 7-ին)
- «Ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգը ու ոչ նյութական մշակութային արժեքի վկայագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի որոշում<sup>6</sup>
- Մշակութային ժառանգության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ, որոնք թվարկված են 2023թ. ԲՍԱԳ-ի Բաժին 2.1.2-ում. Ծրագրի մշակութային ժառանգության վրա ազդեցությունների գնահատում (Հավելված 5):

Նշված օրենքներում մանրամասն ներկայացվում են հուշարձանների դասակարգումը, մշակութային ժառանգության հուշարձանների իրավական պահպանության վերաբերյալ առաջարկությունները, հուշարձանների պետական հաշվառման, հուշարձանների ցանկերի ստուգման, կազմման և հաստատման դրույթները, դրանց պահպանումը որպես հուշարձաններ և որպես պատմական միջավայրի մաս, հետախուզման թույլտվությունները և սահմանում պատասխանատվություն անվթար պահպանման համար<sup>7</sup>:

### 2.1.2 Պահպանվող օբյեկտի կարգավիճակ

Հայաստանի մշակութային ժառանգության օրենքով պահպանվող համակարգը ներառում է առանձին հուշարձաններ և լանդշաֆտային գոտիներ: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ հուշարձանները դասակարգվում են ըստ բնույթի՝ հնագիտական, պատմական, քաղաքաշինական և ճարտարապետական և մոնումենտալ արվեստի: Հուշարձանների պահանջվող պահպանությունը պայմանավորված է հուշարձանների տեսակներով՝ դրանց բնույթի, արժեքավորման և պահպանման աստիճանի հետ միասին: Հետևաբար, մշակութային ժառանգության ոչ բոլոր օբյեկտներն են

<sup>6</sup> ՄԱՊԿՄԿ (ICCROM) երկրի տվյալներ. Հայաստան  
<https://cp.iccrom.org/cprofiles/doku.php?id=countries:arm>

<sup>7</sup> Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ժառանգության գնահատման զեկույցը (լրամշակվել է 2017թ. փետրվարին), [Բաժին 2.2](#)

պաշտպանվում օրենքով. օրենքով պաշտպանվում են միայն հատուկ արժեք, բնույթ և պահպանման կարիք ունեցողները: Հուշարձաններն ըստ իրենց արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և/կամ տեղական նշանակության:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և հատուկ պահպանվող պատմամշակութային օբյեկտների պետական հաշվառումը, պահպանումն ու օգտագործումը: Մշակութային ժառանգությունը պետության կողմից պահպանվող օբյեկտների ցանկում ներառելու համար պատրաստվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ և ներկայացվել կառավարության հաստատմանը: Պատմամշակութային արգելոցներն իրենց բնական և պատմական միջավայրի հետ միասին առանձնահատուկ պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական, ճարտարապետական և բաղաբաշխական արժեք են ներկայացնում:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998թ.) սահմանում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի իրավական հիմքերը և կարգավորում այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը, ի թիվս այլոց, նկարագրում է հուշարձանների հայտնաբերման ու պետական հաշվառման, դրանց շուրջ պահպանության գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է լիազորված մարմնի (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության) հաստատումը նախքան հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը նկարագրում է ՀՀ մշակույթի նախարարության իրավասությունը հուշարձանների պահպանության և օգտագործման համատեքստում:

- Համաձայնություն կամ մասնագիտական եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատակագծման և կառուցապատման, ինչպես նաև հուշարձան համարվող առանձին շինությունների և համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ, դրանց իրականացման ընթացքում վերահսկում է հուշարձանների անվթարության ապահովումը:
- կազմում և սահմանված կարգով հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և սահմանում դրանց պահպանման ռեժիմը:
- արգելում կամ դադարեցնում է հուշարձանի պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, ինչպես նաև շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին:
- թույլտվություն է տալիս հուշարձանների հետախուզման և պեղման աշխատանքների համար, գրանցում դրանք և վերահսկում դրանց կատարման գործընթացը: Ընդունում է հուշարձանների պահպանությանն ուղղված` ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված կոնկրետ լիազորությունները, որոնց համաձայն կարող են կասեցվել շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասում են կարող են վնասել հուշարձանի ու դրա պահպանական գոտու անվթարությունը և այդ մասին տեղեկացնել ՀՀ մշակույթի նախարարությանը:

Ներկայումս Ծրագրի տարածքում մշակութային ժառանգության հատուկ պահպանվող օբյեկտներ չկան: Դա կարող է փոխվել, եթե մշակութային նախարարությունը որոշի պահպանվող օբյեկտի կարգավիճակ տալ մշակութային ժառանգության մեկ կամ մի քանի հայտնաբերված օբյեկտներին:

### 2.1.3 Կառուցապատման վերահսկման միջոցներ

Հետևյալ երկու օրենքները սահմանում են մշակութային ժառանգության կառավարման ընթացակարգերը կառուցապատման համատեքստում՝ «Հողային օրենսգիրք» և «Քաղաքաշինության մասին օրենք» (1998թ.): Դրանք ներառում են լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն և գործառնական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծերը՝ հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար: «Քաղաքաշինության մասին օրենքը» սահմանում է լանդշաֆտների, բնական հուշարձանների ու պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումները, բազային գոտիավորման միջոցով կարգավորում տարբեր հողամասերի օգտագործման հետ կապված ինդիկները:

Ըստ այս օրենքի կառուցապատման վերահսկման միջոցները հիերարխիկ բնույթ ունեն՝ հանրապետական, մարզային և տեղական մակարդակով, որտեղ մշակվում են համայնքի գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագծերը:

Օբյեկտների և դրանց շրջակա միջավայրի պահպանության և բարենպաստ տեսողական ընկալման հնարավորությունների ապահովման նպատակով մշակութային ժառանգությանը վերաբերող օրենսդրությամբ սահմանվում են գոտիներ՝

- հուշարձանների պահպանության գոտի
- կառուցապատման կարգավորման գոտի
- լանդշաֆտի պահպանման գոտի

Հուշարձանների պահպանության գոտիների համակարգը ստեղծվում է բոլոր տեսակի հուշարձանների համար: Այս գոտիների նպատակն է ապահովել հուշարձանի ֆիզիկական պահպանությունը և զերծ պահել այն վնասակար ազդեցություններից՝ միաժամանակ ամրապնդելով իրենց դերը որպես քաղաքաշինության մաս և ապահովելով բարենպաստ տեսողական կապ շրջակա բնական կամ քաղաքային միջավայրի հետ:

Լանդշաֆտի պահպանման գոտիները ստեղծվում են պատմական բնակավայրերի ճարտարապետա-քաղաքաշինական հուշարձանների ներդաշնակ կապը շրջակա բնության հետ ապահովելու և բնության արժեքավոր վայրերը պահպանելու նպատակով:

«Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ հուշարձանների պահպանության պատասխանատվությունը դրված է հուշարձանների սեփականատերերի վրա: Այդուհանդերձ, հաճախ գործող օրենսդրության ոչ պատշաճ իմացության պատճառով առաջարկներն ու աշխատանքները սովորաբար հավանության են արժանանում և կարգավորվում են ՀՀ մշակութային նախարարության կազմում գործող խորհրդատվական երեք մարմինների կողմից, այն է՝ փորձագիտական հանձնաժողով, միջգերատեսչական հնագիտական հանձնաժողով և գիտամեթոդական խորհուրդ, որտեղ ՀՀ գործող օրենսդրության սահմանված կարգով, նրանք քննարկում են հուշարձանի ամրակայման, վերականգնման, ուսումնասիրման, պեղման և պահպանման հարցերը (անկախ սեփականության ձևից):

#### 2.1.4 Բուժերային գոտիներ

‘Բուժերային գոտին’ (տերմին, որը, հավանաբար, ավելի լավ է անգլերեն թարգմանել որպես ‘Պահպանման գոտի’) սահմանվում է որպես «տարածք, որտեղ հայտնաբերվել են մշակութային արժեքների և մշակութային ժառանգության այլ օբյեկտների մեծ կուտակումներ, և որտեղ փողոցների ցանցը, կառուցվապատված տարածքները, նախագծման օրինաչափություններն ու ձևաբանությունը պահպանվում են ինչպես կան»։ Դրանց նպատակը տվյալ օբյեկտը վնասակար ազդեցություններից պաշտպանելն է։

Օրենքում հատուկ բուժերային գոտիների մասին չի նշվում։ Ավելի շուտ, դրանք համաչափ են տվյալ օբյեկտին և հաստատվում են մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուի կողմից. շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող կառուցապատվող տարածքների համար ստեղծվում են զգալի չափի պահպանական գոտիներ, իսկ դրանց շուրջ՝ կառուցապատման կարգավորման գոտիներ և անհրաժեշտության դեպքում լանդշաֆտի պահպանման գոտի։ Օրինակ՝ շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցող ճարտարապետական, քաղաքաշինական (պատմական քաղաք, պատմական կենտրոն), հնագիտական հուշարձանների և մոնումենտալ արվեստի համալիրների համար սահմանվում են զգալի չափերի պահպանական գոտիներ։

#### 2.1.5 Արխիվացում և տեղեկատվության պահպանում

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի (անկախ դրանց նկատմամբ սեփականության իրավունքից) համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման կարգը, արխիվային փաստաթղթերի մատչելիությունն ու օգտագործումը, արխիվային գործի մասին ՀՀ օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը։ Սույն օրենքի կիրարկումն ապահովվում է պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի մասին և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի պահպանության ֆինանսավորման կարգի մասին ՀՀ կառավարության որոշումներով<sup>8</sup>։

<sup>8</sup> Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ժառանգության գնահատման զեկույցը (լրամշակվել է 2017թ. փետրվարին), [Բաժին 2.2](#)



## 2.2 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶՈՓԱՆԻՇՆԵՐ

Հայաստանի գործող նորմատիվ ակտերից և օրենքներից բացի Ծրագրի տարածքում մշակութային ժառանգության վիճակի այս գնահատումն իրականացվում է նաև ՎՁԵԲ-ի Կատարողական պահանջներին և ՄՖԿ-ի Կատարողական չափանիշներին համապատասխան:

### 2.2.1 ՎՁԵԲ-ի Կատարողական պահանջ 8 (ԿՊ8)

ԿՊ8-ի նպատակները հետևյալն են՝

- աջակցել մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանմանը,
- որդեգրել մեղմացման միջոցառումների հիերարխիկ մոտեցում՝ Ծրագրից բխող բացասական ազդեցություններից պաշտպանելու նպատակով
- նպաստել ձեռնարկատիրական գործունեության մեջ մշակութային ժառանգության օգտագործման օգուտների արդարացի բաշխմանը, և
- մշակութային ժառանգության նշանակալի տարրերի հայտնաբերման պարագայում նպաստել մշակութային ժառանգության վերաբերյալ իրազեկմանը, դրա արժևորմանը և հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև տեղական համայնքների համար հնարավոր սոցիալ-տնտեսական օգուտների ապահովմանը.

ԿՊ8-ը հիմքեր է ապահովում «մշակութային ժառանգությունը պաշտպանելու և պատվիրատուներին ուղղորդելու՝ խուսափել կամ մեղմել մշակութային ժառանգության վրա բացասական ազդեցությունները իրենց տնտեսական գործունեության իրականացման ընթացքում: Պատվիրատուները պետք է զգույշ լինեն մշակութային ժառանգության կառավարման և կայուն օգտագործման նկատմամբ իրենց մոտեցումներում»:

Այս քաղաքականությունը կիրառվում է անդառնալի մշակութային ժառանգության նկատմամբ «անկախ նրանից, թե այն պաշտպանված է օրենքով, թե նախկինում խախտվել է: Ինչ վերաբերում է ոչ նյութական մշակութային ժառանգությանը, ապա այս ԿՊ-ի պահանջները կիրառվում են միայն այն դեպքում, եթե Ծրագրի ֆիզիկական բաղադրիչը նյութական ազդեցություն ունենա այդպիսի մշակութային ժառանգության վրա, կամ եթե Ծրագիրը մտադիր է օգտագործել այդպիսի մշակութային ժառանգությունը առևտրային նպատակներով»:

ԿՊ8-ը տարածվում է այն նախագծերի վրա, որոնք

- նախատեսում են զգալի ծավալներով հողափորման, քանդման, հողահեռացման, ջրահեռացման աշխատանքներ, կապված են հեղեղման կամ ֆիզիկական միջավայրի այլ փոփոխությունների հետ,
- գտնվում են նախագծի գործունեության երկրի կողմից ճանաչված մշակութային ժառանգության օբյեկտների սահմաններում կամ դրա շրջակայքում, և/կամ
- կարող են բացասական ազդեցություն ունենալ մարդկանց, այդ թվում՝ բնիկ ժողովուրդների մշակութային ժառանգության ոչ նյութական ձևերի վրա:

Ոչ նյութական ժառանգության վրա ազդեցությունները գնահատելիս պետք է հաշվի առնել, թե արդյոք շրջակա միջավայրը կարևոր նշանակություն ունի մշակութային ինքնությունը և գործելակերպը պահպանելու համար (ներառյալ ավանդական հմտությունները, գիտելիքները, հավատալիքները և/կամ երկրորդական բարբառներն ու լեզուները):

Բնապահպանական և սոցիալական գնահատման վաղ փուլում պատվիրատուն կպարզի, թե արդյոք նախագիծը կարող է բացասական ազդեցություն ունենալ մշակութային ժառանգության որևէ օբյեկտի վրա, և կգնահատի պատահական գտածոների հայտնաբերման

հավանականությունը: Այդ նպատակով պատվիրատուն անհրաժեշտության դեպքում կիրառելի համապատասխան մարմինների, փորձագետների, տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Գնահատման գործընթացը թույլ կտա բնութագրել ելակետային վիճակը, ինչպես նաև հնարավոր ռիսկերը և նախագծի ազդեցությունը մշակութային ժառանգության վրա: Գնահատման շրջանակը բավարար կլինի ազդեցության հավանական մեծությունը, հավանականությունն ու ծանրությունը բնութագրելու և հիմնական համապատասխան շահագրգիռ կողմերի տեսակետները հաշվի առնելու համար: Մշակութային ժառանգության վրա ազդեցությունը վերացնելու նպատակով պատվիրատուն կմշակի և կիրականացնի մեղմացման միջոցառումներ՝ մեղմացման միջոցառումների հիերարխիայի համաձայն և հետևելով միջազգային առաջատար փորձին: Եթե գնահատման արդյունքում պարզվի, որ նախագիծը կարող է էական ռիսկեր պարունակել և ազդեցություն ունենալ մշակութային ժառանգության վրա, ապա պատվիրատուն կներգրավի մշակութային ժառանգության փորձագետ(ներ)ի՝ անհրաժեշտության դեպքում օժանդակելու մշակութային ժառանգության կառավարման պլանի պատրաստմանը:

Պատվիրատուն կկիրառի նախագծի հետ կապված դաշտային հետազոտությունների, փաստաթղթավորման և մշակութային ժառանգության պահպանության միջազգայնորեն ճանաչված մեթոդներ և կապահովի կապալառուների և այլ երրորդ անձանց կողմից նման մեթոդների կիրառումը:

Պատվիրատուն կապահովի նախագծի իրականացման ընթացքում որպես անսպասելիորեն հայտնաբերված նյութական մշակութային ժառանգություն սահմանվող պատահական գտածոների կառավարման վերաբերյալ դրույթների առկայությունը և անհրաժեշտության դեպքում դրանց ներառումը պայմանագրերում: Նման դրույթները կներառեն հայտնաբերված օբյեկտների կամ տեղամասերի վերաբերյալ համապատասխան իրավասու մարմիններին ծանուցումը, նախագծի անձնակազմին, ներառյալ կապալառուի և ենթակապալառուի աշխատակիցներին վերապատրաստելը այն ընթացակարգերի հետ կապված, որոնց անհրաժեշտ է հետևել պատահական գտածոների հայտնաբերման դեպքում, ինչպես նաև գտածոների տարածքի անվտանգության ապահովում՝ հետագա խախտումներից կամ ոչնչացումից խուսափելու համար: Պատվիրատուն չի դիպչի որևէ պատահական գտածոյի մինչև մշակութային ժառանգության փորձագետ(ների) կողմից գնահատում չիրականացվի և չորոշվեն ազգային օրենսդրությանը և սույն ԿՊ-ին համապատասխան միջոցառումները:

Պատվիրատուն բովանդակալից խորհրդակցություններ և նախագծի վերաբերյալ տեղեկատվություն կտրամադրի բոլոր հիմնական շահագրգիռ կողմերին, ինչը թույլ կտա. ա) բացահայտել մշակութային ժառանգության հավանական ազդակիր օբյեկտների առկայությունը, բ) պատկերացնել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական համայնքների համար մշակութային ժառանգության նշանակությունը, գ) գնահատել ազդեցություններն ու ռիսկերը, դ) կիրառել մեղմացման միջոցառումների հիերարխիան և ե) բացահայտել համայնքի հնարավոր օգուտների հնարավորությունները:

## 2.3 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Ամբողջ աշխարհում կան մի շարք պրոֆեսիոնալ հնագիտական կազմակերպություններ, որոնք հրապարակում են հնագիտական լավագույն մեթոդների մանրամասն ուղեցույցներ: Դրանց թվում են Միացյալ Թագավորության Ջնագետների հավատարմագրված ինստիտուտի (Cifa)<sup>9</sup> և ՇՄԿԳԻ-ի (IEMA) կողմից հրապարակված ստանդարտներ և ուղեցույցները, ինչպիսիք են

<sup>9</sup> <https://www.archaeologists.net/codes/cifa>

Մշակութային ժառանգության ազդեցության գնահատման սկզբունքները, որոնք ապահովում են ուղեցույցների մի շարք, որոնք էլ իրենց հերթին լրացնում են գոյություն ունեցող ուղեցույցները և ապահովում են համապատասխան մեխանիզմներ՝ մշակութային ժառանգության վրա ազդեցությունը տարբեր պայմաններում գնահատելու համար:

Ինչ վերաբերում է մշակութային ժառանգության վրա արևային ՖՎ կայանների կառուցապատման աշխատանքների ազդեցություններին, ապա «Build Research Establishment (BRE) Trust»-ի կողմից ստեղծվել է ուղեցույց, որը վերաբերում է այդ ոլորտին, իսկ 2013 հրապարակված «Գետնի վրա տեղադրվող արևային ՖՎ համակարգերի կառուցման նախագծման ուղեցույցը»<sup>10</sup> պարունակում է խորհուրդներ արևային էներգիայի նախագծերի շրջանակներում մշակութային ժառանգության օբյեկտների և հնագիտական գտածոների հետ կապված խնդիրները լուծելու համար:

### 2.3.1 Տարածաշրջանային նախադեպեր

Վերջին տարիներին միջազգային ֆինանսական աջակցությամբ և առաջատար փորձի կիրառմամբ Թաիլանդի շրջակայքում իրականացվել են կառուցապատման մի քանի խոշոր նախագծեր, այդ թվում՝ մի շարք ավարտված և շարունակվող ճանապարհային նախագծեր, որոնց շրջանակներում հայ հնագետների կողմից իրականացվել են ազդեցությունների մեղմման և մշտադիտարկման հնագիտական նախագծեր, որոնք ներառում էին կամերալ ուսումնասիրություններ, հնագիտական տեսանկյունից խոցելի տարածքների հետախուզական խրամուղիների փորում, մինչ շինարարությունը պեղումների իրականացում այն վայրերում, որտեղ հնագիտական օբյեկտներից խուսափել հնարավոր չէր և ի վերջո, վերլուծություն և հրապարակում:

## 2.4 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 2.4.1 Օրենքով պահպանվող/հատուկ պահպանվող հուշարձաններ

Հանրապետական նշանակության կամ օրենքով պահպանվող հուշարձաններ ուսումնասիրվող տարածքում ներկայումս չկան:

### 2.4.2 Հատուկ պահպանվող օբյեկտների ցանկում չընդգրկված («չառանձնացված») մշակութային ժառանգության հուշարձաններ/հնավայրեր

Մշակութային ժառանգության հետաքրքրություն ներկայացնող, տարբեր արժեք/նշանակություն ունեցող բազմաթիվ օբյեկտներ, այնուամենայնիվ, հայտնաբերվել են ուսումնասիրվող տարածքում (Ծրագրի ազդեցության գոտի + 100մ բուժերային գոտի) 2022-2023թթ. իրականացված ուսումնասիրությունների և Ծրագրի տեղամաս շրջայցերի ընթացքում: Ամբողջական ցանկը տե՛ս ՄԺԿ-ի տեղեկագիրը (Հավելված 1): Դրանք ներառում են պատաշարի հատվածներ, ներփակված տարածքներ, դամբարաններ/դամբանաբլուրներ, աշտարակային կառույցներ, ամբողջական որսադարաններ, բնակատեղիներ, վանակատե գործիքներ և իրերի ցրոններ: Դրանց քանակական գնահատումը ներկայացված է ստորև Աղյուսակ 1-ում


<sup>10</sup> BRE 2013թ., էջ13

Աղյուսակ 1. Մշակութային ժառանգության օբյեկտներն ուսումնասիրվող տարածքում խմբավորված ըստ օբյեկտի տեսակի

Հայտնաբերված օբյեկտների տեսակները	Օբյեկտի տեսակի քանակը
Վանակատե/բարե իրեր (արտեֆակտներ)	8
Պաշտամունքային կառույց	2
Ներփակված տարածք	29
Խաչքար	1
Որսադարան	4
Ժայռապատկեր	1
Հավանական դամբարան	8
Բնակավայր	11
Կառույց	5
Դամբարան	25
Դամբանաբլուր	1
Աշտարակ	7
Աշտարակ և ներփակված տարածք	1
Աշտարակ և պատաշար	1
Պատաշար/պատաշարի հատված	63
Պատաշարի հատված և ներփակված տարածք	1
Պատաշարի հատված և աշտարակ	1
Պատաշարի հատվածների աշտարակի հետ միասին	1

Ուսումնասիրվող տարածքում հայտնաբերվել է, ընդհանուր առմամբ, 170 օբյեկտ, որոնցից 67-ը՝ ավելի բարձր խոցելիություն ունեն, քան մնացածը (տե՛ս **Նկարներ 1 եւ 2**): 2023 թվականին ԲՍԱԳ-ի կամ սույն ՄԺԿՊ-ի կազմման (2023թ. օգոստոս) պահին դրանցից ոչ մեկն օրենքով չէր պահպանվում:

Նկար 2. Ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված մշակութային ժառանգության օբյեկտների տեղեկագիր, որոնք ներկայացված են ըստ ժառանգության արժեքի/նշանակության:



### 3 ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 3.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշակութային ժառանգության կառավարման համապարփակ մոտեցումը ներառում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակի մասնակցություն, ներառյալ Ընկերությունը, կապալառուները (և ենթակապալառուները), տեղական իշխանությունները և/կամ կարգավորող մարմինները: Այսպիսով, մշակութային ժառանգության արդյունավետ կառավարումը պահանջում է տեղեկատվության տարածման, պատասխանատվության սահմանման, վերապատրաստման, կառավարման գործողությունների, մոնիթորինգի, վերահսկման և մեղմացման միջոցառումների հետ կապված ակտիվ գործընթացներ:

Հաշվի առնելով կառուցապատման տեղամասում հնագիտական ռեսուրսների լայնատարած բնույթը և անհրաժեշտ լրացուցիչ հետազոտությունների և մեղմացման աշխատանքների ծավալը, Ընկերությանը խորհուրդ է տրվում նշանակել մշակութային ժառանգության հարցերի պատասխանատու կամ «հնագիտական աշխատանքների պատասխանատու»՝ մշակութային ժառանգության կառավարման պլանի իրականացումը կազմակերպելու համար:

Հիմնական շահագրգիռ կողմերի ընդհանուր աշխատանքային պարտականությունները ներկայացված են ստորև Աղյուսակ 2. Ներգրավված կողմերի (Ընկերություն, կարգավորող մարմիններ և կապալառուներ) միջև ընդհանուր աշխատանքային պարտականությունները:

Աղյուսակ 2. Ներգրավված կողմերի (Ընկերություն, կարգավորող մարմիններ և կապալառուներ) միջև ընդհանուր աշխատանքային պարտականությունները

Խնդիր/աշխատանք	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ	ՄԺՎՊ	ՆԳՇ ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ	ՄՖՀ
Նախագծում						
Տեղեկատվության տարածում						
Տեղամասի նախապատրաստում						
Մշակութային ժառանգության պահպանման աշխատանքների / մեղմացման միջոցառումների կառավարում						
Մշակութային ժառանգության պահպանման աշխատանքների և ուղղիչ գործողությունների (անհրաժեշտության դեպքում) արդյունքների ստուգում						
Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի իրականացում						
Վերապատրաստում						

ՇԲԿՊ-ին համապատասխանության կառավարում						
---------------------------------------	--	--	--	--	--	--

ՄԺԿՊ-ի շրջանակներում կոնկրետ պարտականությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են ստորև Բաժին 3.2 – 3.7-ում:

### 3.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մասդար Արմենիա» ընկերությունը պատասխանատու է հիմնական գնումների և կառավարման գործունեության համար, ներառյալ.

- ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ գնումների մշակում և իրականացում.
- Տեղամասում մշակութային ժառանգության հարցերով ներկայացուցչի (հնագիտական աշխատանքների պատասխանատու) նշանակում և հրահանգավորում Ընկերության անունից ՄԺԿՊ-ի իրականացումը կազմակերպելու համար.
- Կապալառուների վերահսկում և հսկողություն.
- Կապալառուի աշխատանքի մշտադիտարկում.
- Ինտուիտիվ և արդյունավետ կառավարման համակարգի ներդրում, որը հստակ նշում է յուրաքանչյուր կողմի կոնկրետ դերը.
- Մշակութային ժառանգության օբյեկտների գտնվելու վայրի, չափի և խոցելիության, ինչպես նաև Ծրագրի ազդեցությունների ակնկալվող չափի մասին բոլոր կողմերի տեղեկացվածության ապահովում.
- Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի պահանջների կատարման ապահովում.
- Կառավարչական գործառույթների իրականացում որևէ միջադեպի առաջացման կամ որևէ վեճի ծագման դեպքում (ներառյալ իրադարձությունների գրանցումը և դրանց մասին տեղեկացումը)

Ծրագրի շրջանակներում Ընկերությունը կվարձի Մշակութային ժառանգության հարցերի պատասխանատու (ՄԺՊ) կամ «հնագիտական աշխատանքների պատասխանատու»՝ սույն ՄԺԿՊ-ում սահմանված բոլոր միջոցառումները վերահսկելու նպատակով: Պատասխանատուն պետք է ունենա լայնածավալ կառուցապատման նախագծերում մշակութային ժառանգության/հնագիտության աշխատանքների կառավարման առնվազն 5 տարվա փորձ: Նա պատասխանատու է ապահովել հետևյալը.

- ՄԺԿՊ-ի բոլոր բաղադրիչների իրականացումը, աշխատանքների կատարման պատշաճ որակի նախագիծ, դրա բովանդակության մշակումը և համաձայնեցումը համապատասխան մարմինների հետ,
- որ կապալառուն ընկալի հնագիտական աշխատանքների պահանջները,
- որ հնագիտական ծրագիրն իրականացվի համաձայնեցված ժամկետներին համապատասխան
- հավաքագրել տեղեկություններ տեղում մշակութային ժառանգության մշտադիտարկում իրականացնող մասնագետներից

Կազմակերպության շրջանակներում կկիրառվեն, մասնավորապես, հետևյալ պաշտոններն ու պարտականությունները.

Պաշտոն	Պարտականություն
ՆԳՇ ղեկավար	<ul style="list-style-type: none"> <li>• Ընդհանուր պատասխանատվություն է կրում սույն ՄԺԿՊ-ի իրականացման համար, ներառյալ ՆԳՇ կապալառուների կողմից,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակութային ժառանգության կառավարման այս պլանի և դրա իրականացման համար նախատեսված միջոցների հաստատման համար</li> <li>• Ապահովում է սույն պլանով սահմանված պահանջներին ծրագրի ընդհանուր համապատասխանությունը</li> <li>• Հանդես է գալիս որպես կոնտակտային անձ արտակարգ իրավիճակներում</li> <li>• Մշակում, հետևում և վերանայում է սույն պլանը՝ օրենսդրության փոփոխություններին կամ ի հայտ եկող այլ պահանջներին համապատասխան</li> <li>• ՄԺԿ-ի կատարմանը մասնակցող անհրաժեշտ կողմերի բացահայտում և համագործակցում</li> <li>• Շահագործման ընթացքում ստուգման և մոնիթորինգի պլանի մշակում (համապատասխան առանցքային շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնելով)</li> </ul>
<p><b>Մշակութային ժառանգության հարցերի պատասխանատու</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովում է ՄԺԿ-ի բոլոր բաղադրիչների ամբողջական կատարումը.</li> <li>• պատրաստել ազգային օրենսդրությանը, միջազգային չափորոշիչներին համապատասխան աշխատանքների կատարման և տեղում լրացուցիչ գնահատման և/կամ մեղմացման աշխատանքների իրականացման մեթոդաբանություն (նախագիծ)՝ խորհրդակցելով մշակույթի նախարարության/համապատասխան մարմինների հետ</li> <li>• ապահովել, որ կապալառուն ընկալի հնագիտական աշխատանքների պահանջները.</li> <li>• Վարել և վերահսկել հնագիտական աշխատանքների շրջանակներում գնահատման և մեղմացման միջոցառումների նպատակով իրականացվող ծրագիրը և ծախսերը (և պատասխանատվություն է կրում հնագիտական ծրագրի՝ համաձայնեցված ժամկետներում իրականացման համար).</li> <li>• Ապահովել հնագիտական աշխատանքներ կատարողների կողմից իրականացվող աշխատանքների (հնագիտական պեղումներ, հնավայրի պահպանում, վիբրացիայի վերահսկում և այլն) որակի ապահովում.</li> <li>• Ստուգել ՆԳՇ հնագիտական հարցերով վերահսկիչների կողմից պատրաստված հաշվետվությունները.</li> <li>• Կապ հաստատել համապատասխան բոլոր կազմակերպությունների՝ պատվիրատուի, կապալառուների, մշակույթի նախարարության, ՎՁԵԲ հետ՝ ապահովելու բոլոր կողմերը տեղեկացվածությունը հնագիտական աշխատանքների ընթացքի մասին.</li> <li>• Կապ հաստատել ՆԳՇ հնագետի և հնագիտական հարցերով վերահսկիչների, պատվիրատուի և կապալառուների հետ՝ ապահովելու, որ նախագծի ցանկացած փոփոխությանը և/կամ ժամանակավոր աշխատանքներին (օրինակ՝ հողի բերրի շերտի կուտակում, կապալառուների բանավաններ, նյութերի պահեստավորման տարածքներ, տեխնոլոգիական ճանապարհներ կամ հանքեր) նախորդում են համապատասխան հնագիտական հետազոտություններ, հաշվետվությունների ներկայացում և ազդեցությունների գնահատումներ.</li> </ul>



	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել Ծրագրի մշակութային ժառանգության ԱՏՀ տվյալների բազայի պահպանումն ու թարմացումը.</li> <li>• Ապահովել պեղումներից հետո վերլուծությունների իրականացումն ու հաշվետվությունների ներկայացումը միջազգային առաջատար փորձին համատասխան:</li> </ul>
--	--

### 3.3 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

#### 3.3.1 ՏԿԵՆ

Կառավարության աջակցության համաձայնագրով «Այգ-1» ՖՎ կայանի նախագիծը գտնվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) վերահսկողության ներքո: Այդուհանդերձ, Ընկերությունը և նրա կապալառուները, վերջին հաշվով, պատասխանատու են Ծրագրի նախագծման և իրականացման համար:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն (ՏԿԵՆ) է<sup>11</sup>: Այն գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը: «Այգ-1» ՖՎ կայանի կառուցման նպատակով Ընկերության և նախարարության միջև ստորագրվել է Կառավարության աջակցության համաձայնագիր:

#### 3.3.2 Մշակույթի նախարարություն

ՀՀ մշակույթի նախարարությունը մշակույթի բնագավառում ՀՀ կառավարության կազմում գործող պետական լիազորված մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ քաղաքականությունը: Պետական կառավարման տարածքային մարմինների հետ միասին ապահովում է պետական մշակութային տարածքային քաղաքականության իրականացումը: Այն ունի մի շարք պարտականություններ, սակայն ներառում է մշակութային ժառանգության հաշվառման, պահպանման, օգտագործման գնահատման չափանիշներ, հաստատում է նախագծերի տարածքներում հուշարձանների/լանդշաֆտների պահպանության գոտիները և սահմանում դրանց պահպանման ռեժիմը: Որպես այդպիսին, այն տրամադրում է թույլտվություններ մշակութային ժառանգության հետ կապված բոլոր աշխատանքների համար, տալիս է պեղումների թույլտվություններ: Նախարարությունը պատասխանատու է կարևոր նշանակություն ունեցող մշակութային ժառանգության օբյեկտների բացահայտման, դրանց պատշաճ իրավական պահպանության ապահովման և ժառանգության մասին ՀՀ օրենքների կիրարկման համար այն դեպքերում, որտեղ նման օբյեկտները վտանգված են կառուցապատման պատճառով:

#### 3.3.3 Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն

Մշակույթի նախարարության ենթակայության տակ գտնվող Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկ է, որը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պատմամշակութային անշարժ հուշարձանների և պահպանվող պատմամշակութային վայրերի պետական գրանցումը, պահպանությունը և օգտագործումը:

<sup>11</sup> ՏԿԵՆ, ՀՀ կառավարություն [www.gov.am](http://www.gov.am)

Այսպիսով, կարգավորող հենց այս մարմիններն են պատասխանատու, որ Ծրագիրը կառուցվի ՀՀ օրենսդրությանը համապատասխան, և որ կիրառվեն մշակութային ժառանգության կառավարման համապատասխան նորմերը:

### 3.4 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՎԱԳ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Աշխատանքների արտաքին վերահսկողությունը և պահանջների կատարման երաշխավորումը կապահովի միջազգային չափանիշներով աշխատող մշակութային ժառանգության և հնագիտական նախագծերի ղեկավարման հաստատված փորձ ունեցող՝ մշակութային ժառանգության հարցերի ավագ պատասխանատուի (ՄԺԱՊ) կողմից: Նրա գործառույթների շրջանակը ներառում է մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված միջոցառումների անկախ և անկողմնակալ վերլուծության և ՄԺԱՊ-ի պահանջներին, միջազգային չափանիշներին և վարկատու պահանջներին համապատասխանության ապահովումը: Ավագ պատասխանատուն աջակցելու և ստուգելու է ՄԺԱՊ-ի պահանջների կատարումը մինչև շինարարությունը, շինարարության և շինարարությունից հետո փուլերի ընթացքում, այդ թվում՝ աջակցություն ԱՏՀ (GIS) տվյալների բազայի և հաշվետվությունների ներկայացման թվային համակարգի ստեղծմանը, ներառյալ տեղեկատվական վահանակներ, որտեղ ցույց կտրվի աշխատանքների վերահսկողության (մշտադիտարկումների) ընթացքը և Պատահական գտածոների կառավարման ընթացակարգով բացահայտված ցանկացած նոր օբյեկտի գտնվելու վայրը/կարգավիճակը: ՄԺԱՊ-ը կապահովի, որ մինչ շինարարությունը ազդեցությունների մեղմման աշխատանքներն իրականացվեն ՄԺԱՊ-ին համապատասխան, կաջակցի մշակութային ժառանգության պահպանման աշխատանքներ իրականացնող խմբի մոբիլիզացումը շինարարական աշխատանքների մեկնարկին, իրականացնել ԱՏՀ տվյալների բազային ամսական ստուգումներ, վարել մշակութային ժառանգության գտածոների/գործողությունների գրանցամատյան և պարբերաբար կատարել շրջայցեր տեղամաս՝ միջոցառումների ամբողջական և պատշաճ իրականացումն ապահովելու համար:

### 3.5 ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԳՇ կապալառուները պատասխանատու են ԲՍԱԳ-ով, Ծրագրի Բնապահպանական կառավարման պլանով սահմանված՝ մշակութային ժառանգությանը վերաբերող պարտավորությունների կատարման և Մշակութային ժառանգության կառավարման պլանի և Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի ընկալման և իրականացման համար: Այս պարտավորություններն ու հաշվետվությունների ներկայացման պահանջները ամփոփ ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

ՆԳՇ կապալառուների պարտավորություններն ու պարտականությունները	Հաշվետվությունների ներկայացման պարտավորություն	Ստորագրման պարտականություններ
<ul style="list-style-type: none"> <li>Ուսումնասիրել, հասկանալ և իրականացնել ՄԺԱՊ-ն</li> <li>Մասնակցել ՄԺԱՊ-ին նվիրված պահանջվող դասընթացներին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դասընթացի և ՄԺԱՊ-ի ստուգման ավարտական թերթիկներ ստորագրելու համար</li> </ul>	<p><b>Ներքին ստորագրություններ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>i) Շինարարական աշխատանքների ղեկավար</li> <li>ii) Բնապահպանական աշխատանքների ղեկավար</li> <li>iii) ՄԺՊ</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>• Տեղադրել և վերահսկել ցանկապատերի և օբյեկտների պահպանման վիճակը (տե՛ս Հավելված 3. Օբյեկտին հատուկ մեղմացման միջոցառումների մանրամասն քարտեզներ)</li> <li>• Սահմանել և հետևել տրանսպորտային միջոցների կառավարման պլանի պահանջներին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Արձանագրել ցանկապատի տեղադրման ավարտը (և շտկել բուժերի հեռավորությունները)</li> </ul>	<p><b>Ներքին ստորագրություններ`</b>  i) Շինարարական աշխատանքների ղեկավար  ii) Բնապահպանական աշխատանքների ղեկավար  iii) ՄԺՊ</p> <p><b>Արտաքին ստորագրություններ`</b>  i) Կարգավորող մարմին  ii) ՄԺԱՊ</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՄԺՊ-ին և հնագիտական հարցերով վերահսկիչին տեղեկացնել, թե որտեղ է անհրաժեշտ մշակութային ժառանգության արժեք չներկայացնող ցածրադիր պատերի և քարերի հեռացումը` ավտոմեքենաների և տեխնիկայի տեղաշարժը շինհրապարակ ապահովելու համար: Հնարավորության դեպքում տեքստիլի պաշտպանիչ շերտի տեղադրում ազդակիր ցածրադիր պատի կամ քարոտ տարածքի վրա: Ցանկացած հատուկ տեղամասեր պետք է հատկացվեն դրանց ստեղծումից առնվազն մեկ շաբաթ և հաստատվեն ՄԺՊ-ի և մծտադիտարկվեն հնագիտական հարցերով վերահսկիչի կողմից:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Պարբերական հաշվետվություններ ցանկապատի վիճակի մոնիթորինգի և հետագա աշխատանքների մասին, եթե անհրաժեշտ լինեն շինարարության փուլում: Շահագործման փուլում հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու է Ընկերությունը</li> </ul>	<p><b>Ներքին ստորագրություններ`</b>  i) Շինարարական աշխատանքների ղեկավար  ii) Բնապահպանական աշխատանքների ղեկավար  iii) ՄԺՊ</p> <p><b>Արտաքին ստորագրություններ`</b>  i) ՄԺԱՊ</p>
<ul style="list-style-type: none"> <li>• Տեղյակ լինել նախագծի փոփոխություններ մասին և</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարության ընթացքի և հաջորդ շաբաթ նախատեսվող աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ</li> </ul>	<p><b>Ներքին ստորագրություններ`</b>  i) Շինարարական աշխատանքների ղեկավար  ii) Բնապահպանական աշխատանքների ղեկավար  iii) ՄԺՊ</p> <p><b>Արտաքին ստորագրություններ`</b>  i) ՄԺԱՊ</p>

<p>ցանկացած փոփոխության մասին գծապատկերներով քարտեզների միջոցով տեղեկացնել համապատասխան կողմերին՝ ցույց տալով նախատեսվող ազդեցության տարածքը և հարևանությամբ գտնվող մշակութային ժառանգության ցանկացած հայտնի օբյեկտ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գտնել և ներգրավել որակավորում ունեցող հնագիտական հարցերով վերահսկիչներ (լրիվ դրույթով)՝ ՄԺԿՊ-ում որոշակի աշխատանքներ կատարելու համար</li> <li>• Ապահովել անհրաժեշտ պլանների, ռեսուրսների և հաղորդակցության միջոցների հասանելիությունը հնագիտական հարցերով վերահսկիչների և հնագիտական աշխատանքներ կատարողների համար</li> <li>• Ապահովել աշխատանքի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և տեղեկատվության ժամանակին փոխանցումը համապատասխան վերահսկիչներին / կարգավորող մարմիններին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտի մասին հաշվետվություն: Սա պետք է ներառի հնագիտական աշխատանքների ամփոփ զեկույցներ, որոնք ներկայացնվում են հնագիտական հարցերով վերահսկիչների և ղեկավարի կողմից</li> </ul>	<p><b>Ներքին ստորագրություններ՝</b></p> <p>i) Շինարարական աշխատանքների ղեկավար ii) Բնապահպանական աշխատանքների ղեկավար iii) ՄԺԿՊ</p> <p><b>Արտաքին ստորագրություններ՝</b></p> <p>i) Կարգավորող մարմին ii) ՄԺԿՊ</p>
---	--	---

Կապալառուի աշխատակազմի հետևյալ անդամները պարտավոր են ապահովել ՄԺԿՊ-ի պահանջների ամբողջական կատարումը.

Պաշտոն	Պարտականություն
Ծրագրի ղեկավար	<ul style="list-style-type: none"> <li>• Ընդհանուր պատասխանատվություն է կրում կապալառուի մասով ՄԺԿՊ-ի իրականացման համար</li> <li>• Ապահովել, որ կառուցապատողի կամ մշակույթի նախարարության հետ համաձայնեցված նախագծի ցանկացած փոփոխություն իրականացվի ամբողջությամբ և ժամանակին և նման փոփոխությունների մասին հստակ տեղեկացվի շինարարական աշխատանքների ղեկավարին, շինարարության</li> </ul>

	<p>վերահսկիչներին, բնապահպանական աշխատանքների ղեկավարին, հնագիտական հարցերով վերահսկիչներին</p>
<p><b>Շինարարական աշխատանքների ղեկավար</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել ՄԺԿԴ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների և այդ պահանջների կատարման համար անհրաժեշտ գործողությունների ժամանակին և արդյունավետ կատարումը, ներառյալ շինարարական անձնակազմի կողմից ՄԺԿԴ պահանջների կատարումը</li> </ul>
<p><b>Բնապահպանական աշխատանքների ղեկավար</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Համակարգում է հիմնական շահագրգիռ կողմերի միջև աշխատանքները</li> <li>• Ապահովել մշակութային ժառանգության պահպանության հետ կապված՝ Ծրագրի պարտավորությունների ամբողջական կատարումը և անհրաժեշտ միջոցների տրամադրումը հնագիտական հարցերով վերահսկիչներին և հնագիտական աշխատանքների կատարողներին</li> <li>• Ժամանակին և արդյունավետ կերպով արձագանքել ՄԺԴ-ի, շինարարության վերահսկիչների (կամ հնագիտական հարցերով վերահսկիչների) հարցումներին/ հրահանգներին, ներառյալ տեղեկացնել աշխատանքի դադարեցման մասին այն վայրերում, որտեղ շինարարության ընթացքում հայտնաբերվել են հնագիտական մնացորդներ՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ հնագիտական հետազոտությունների և հնավայրերի ցանկապատման համար</li> </ul>
<p><b>Հնագետ (Ղեկավար)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կապ հաստատել ՄԺԴ-ի հետ՝ շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների ընդհանուր որակն ապահովելու համար</li> <li>• Ղեկավարել հնագիտական հարցերով վերահսկիչների խումբը, որը տեղում աջակցում է ՄԺԿԴ-ի իրականացմանը շինհրապարակներում</li> <li>• Ապահովել ՊԳԸ արդյունավետ իրականացումը</li> <li>• Կապ հաստատել ՄԺԴ-ի և, անհրաժեշտության դեպքում, կարգավորող մարմինների հետ</li> <li>• Հետևել շինարարական աշխատանքներին, մասնավորապես, հողի մակերևույթի խախտմանն առնչվող աշխատանքները</li> <li>• Հանդես գալ որպես ժառանգության նյութական կամ ոչ նյութական արժեք ներկայացնող օբյեկտների և/կամ տարրերի հայտնաբերման հուսալի աղբյուր</li> <li>• Ապահովել արդյունավետ հաղորդակցություն կապալառուների հետ տեղում</li> <li>• Կապալառուների անձնակազմի վերապատրաստում ՄԺԿԴ-ի և ՊԳԸ-ի վերաբերյալ</li> <li>• Խնդիրների և ընթացքի մասին զեկուցում</li> </ul>
<p><b>Հնագիտական հարցերով վերահսկիչներ (յուրաքանչյուր շինհրապարակում առնվազն 1 մասնագետ)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովում է, որ ՄԺԿԴ-ի բոլոր բաղադրիչներն ամբողջությամբ իրականացվեն տեղում</li> <li>• Ապահովում է կապալառուի աշխատանքների հսկողությունը և որ շինարարական թիմը հասկանա տեղում հնագիտական աշխատանքների պահանջները և գործի դրանց համապատասխան</li> <li>• Ապահովել կապալառուների հետ արդյունավետ հաղորդակցություն ընդում</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Կապ հաստատել կապալառուների հետ՝ ապահովելու, որ Նախագծի ցանկացած փոփոխության և/կամ ժամանակավոր աշխատանք (օրինակ՝ հողի բերրի շերտի կուտակում, կապալառուների բանավաններ, նյութերի պահեստավորում, տեխնոլոգիական ճանապարհներ, հանքեր) նախորդում են համապատասխան հնագիտական հետազոտություններ, հաշվետվությունների ներկայացում և ազդեցությունների գնահատումներ</li> <li>• Արդյունքները/եզրակացությունները/խնդիրները ներկայացնում է գլխավոր հնագետին</li> </ul>
--	--

### Հնագիտական հարցերով վերահսկիչներ (ԼԳՇ)

ԼԳՇ-ի կամ նրանց նշանակված բնապահպանական աշխատանքների վերահսկիչների կողմից լրիվ դրույթով կներգրավվեն հնագիտական հարցերով վերահսկիչներ, ովքեր պետք է լինեն վերապատրաստված և որակավորում ունեցող հնագետներ և ունեն տարածաշրջանի մասին հնագիտական գիտելիքներ: Բավարար թվով վերահսկիչներ (մշտադիտարկողներ) կներգրավվեն՝ տարածքի բոլոր տեղամասերում շինարարական աշխատանքների շարունակական վերահսկումն իրականացնելու համար: Նրանք կաշխատեն գլխավոր հնագետի հսկողության ներքո և ըստ ՄԺՊ-ի կողմից պատրաստված մեթոդաբանության: Հնագիտական հարցերով վերահսկիչները իրենց տվյալները կներկայացնեն ԼԳՇ-ի կողմից ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար ներկայացվող հաշվետվություններում, որոնք կփոխանցվեն Ընկերությանը և կարգավորող մարմիններին:

## 3.6 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐ

### 3.6.1 Դաշտային աշխատանքներ կատարող կապալառուներ

Ցանկացած հնագիտական դաշտային աշխատանքները, ներառյալ գնահատողական հետազոտությունները և մեղմացման միջոցառումները պետք է իրականացվեն Հնագիտական աշխատանքներ կատարող կապալառուի կողմից, ով ունի տարածաշրջանում/երկրում հնագիտական աշխատանքների հաստատված փորձ:

Հնագիտական աշխատանք կատարողների համար ուղեցույցները կմշակվեն ՄԺՊ-ի կողմից՝ կարգավորող մարմնի (մշակույթի նախարարության) հետ խորհրդակցելով: Սովորաբար հնագիտական հարցերով վերահսկիչներից չպետք է պահանջվի նման աշխատանք կատարել:

Գործառույթներն ու պարտականությունները ներառում են՝

Պաշտոն	Պարտականություն
<b>Հնագիտական ծրագրի ղեկավար</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ղեկավարել և վերահսկել հետազոտությունը՝ ապահովելով դրա ժամանակին կատարումը, ներառյալ ինչպես դաշտային աշխատանքը, այնպես էլ հետազոտությունից հետո վերլուծությունը, հաշվետվության ներկայացումը և արխիվացումը</li> <li>• Ստուգել և պատկերացում կազմել հետազոտական աշխատանքի մասին և ապահովել մասնագետների կողմից ներկայացված տվյալները հետազոտության վերաբերյալ</li> <li>• Սերտորեն համագործակցել Ընկերության ՄԺՊ-ի, հնագիտական աշխատանքների մշտադիտարկողների, շինարարության վերահսկիչների և բնապահպանական աշխատանքների ղեկավարի հետ՝</li> </ul>

	<p>աշխատանքների վիճակի և ավարտի մասին պատկերացում կազմելու նպատակով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել Առողջության և անվտանգության արձանագրությունների պահանջների կատարումը</li> </ul>
<b>Դաշտային մասնագետ - հնագետ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պրոֆեսիոնալ կերպով իրականացնում է հնագիտական հետախուզական աշխատանքներ</li> <li>• Ներկայացնում է մասնագիտական կարծիքը հետազոտության մասին</li> <li>• Արձագանքում է հնագիտական ծրագրի ղեկավարի հրահանգներին</li> <li>• Օժանդակում է հետազոտությունից հետո վերլուծության, հաշվետվությունների կազմմանն ու արխիվացմանը</li> </ul>

### 3.7 ԱԹՍ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ/ՄՈՂԵԼԱՎՈՐՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐ

ԱԹՍ-ներով լուսանկարահանող/Մոդելավորող կապալառուները պատասխանատու են ԲՍԱԳ-ով առաջարկվող՝ մշակութային ժառանգության օբյեկտների տվյալների հավաքագրման, մշակման և 3D ձևաչափով նկարահանված նյութերի տրամադրման համար:

Տվյալների հավաքագրումը ներառում է երկու բաղադրիչ՝ վերգետնյա և ԱԹՍ-ների միջոցով օդային լուսանկարահանումներ: ԱԹՍ-ներով լուսանկարահանող և մոդելավորող կապալառուները պատասխանատվություն են կրելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն ԱԹՍ-ի թռիչքի և վարման, ինչպես նաև աշխատանքն անվտանգ և արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Գործառույթներն ու պարտականությունները ներառում են՝

<b>Պաշտոն</b>	<b>Պարտականություն</b>
<b>ԱԹՍ/մոդելավորման ծրագրի ղեկավար</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ղեկավարել և վերահսկել տվյալների հավաքագրման և մոդելավորման ընթացող աշխատանքները և ապահովել արդյունքների ժամանակին ստացումը</li> <li>• Հաստատել ԱԹՍ թռիչքի պլանը և Առողջության և անվտանգության ցանկացած պահանջ</li> <li>• Ապահովել ստացվող արդյունքների համապատասխանությունը համաձայնեցված աշխատանքային պլանով սահմանված պահանջներին</li> </ul>
<b>ԱԹՍ-ի օպերատոր /Լուսանկարահանող</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել համաձայնեցված աշխատանքային պլանով սահմանված՝ տվյալների ճշգրիտ և ամբողջական հավաքագրումը</li> <li>• Ապահովել թռիչքի պլանի պահանջների կատարումն ու անվտանգ թռիչքների իրականացումը</li> </ul>
<b>Մոդելավորող</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել ստացվող արդյունքների համապատասխանությունը համաձայնեցված աշխատանքային պլանով սահմանված պահանջներին</li> </ul>

### 3.8 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՄՖՀ)

Որպես Ծրագրին աջակցող ֆինանսական հաստատություն՝ ՎՁԵԲ-ը պարտավոր է ապահովել, որ կառուցապատման աշխատանքներն իրականացվեն իրենց քաղաքականությանն ու չափանիշներին համապատասխան: Բանկը վերահսկելու է շինարարության (և շահագործման) գործընթացը և ապահովելու դրանց իրականացումը մշակութային ժառանգության պահպանը

վերաբերող իրենց սահմանած չափանիշներին համապատասխան (ամփոփ ներկայացված է Բաժին 2.2.ում): Եթե Ծրագրի կողմից իրականացվող աշխատանքների որևէ բաղադրիչ չհամապատասխանի նշված չափանիշներին, ապա Բանկը կներկայացնի առաջարկություններ Ընկերությանն ու մշակույթի նախարարությանը ինչպես վերացնել թերությունները:

Պաշտոն	Պարտականություն
<b>ՄՖՀ ծրագրի ղեկավար</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել, որ շինարարությունն իրականացվի մշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող իրենց չափանիշներին համապատասխան</li> <li>• Ապահովել ԾԲԿՊ-ի պահանջների կատարումը</li> </ul>



## 4 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

### 4.1 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Արագած լեռան հարավային լանջերին գտնվող պատմամշակութային լանդշաֆտն ընդգրկում է ստորին պալեոլիթից (մոտ 1,5 մլն – 200 000 տարի առաջ) մինչև միջնադար ընկած ժամանակահատվածը: Տարածքն օգտագործվել է մինչև խորհրդային ժամանակաշրջանը: Կարելի է նկատել ավելի վաղ ժամանակներից (մեզոլիթից մինչև երկաթի դար. մոտ մ.թ.ա. 12000-600թթ.) պահպանված այսպես կոչված «անապատային օդապարուկների» (որսադարաններ) կառույցներ (որոնք ստեղծվել են որսի, թակարդման, անասնապահության և ծիսական նպատակներով)՝ ներփակված տարածքներով, ինչպես նաև ագլոմերատիվ բնակավայրեր, աշտարակներ և գերեզմանոցներ:

Վերջին հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանը և Հայկական լեռնաշխարհը մոտ են Եվրասիայում մարդու մշտաբնակության (ստակյացության) որոշ ամենավաղ վկայություններին (ինչպես վկայում են Արևելյան Թուրքիայի վաղ նեոլիթյան հուշարձանները, ինչպիսին է Գյոբեքլե Թեփեն, որը թվագրվում է մ.թ. ա. տասներորդ հազարամյակով): Որպես այդպիսին, այն ունի շատ խորը և հարուստ հնագիտական վկայություններ, ներառյալ որսման և թակարդման հնագույն համակարգերի բազմաթիվ վկայություններ, ինչպիսիք են որսադարանները: Նման կառույցները լայն տարածում ունեն Թալին-Կարմրաշեն սարահարթում (ավելի քան 150 000 հա տարածք), որի սահմաններում գտնվում է Ծրագրի տարածքը:

Տեղագրական առումով Ծրագրի տարածքը գտնվում է Թալինի սարահարթում, որը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան կողմում: Սարահարթը ձևավորվել է հիմնային լավայի հոսքերի և հրաբեկորային նստվածքների շերտախմբով, որոնք կարելի է տեսնել Կարմրաշեն գետի և դրա վտակների երկայնքով: Սարահարթից տեսարան է բացվում դեպի հարավ Մաստարա Սելավ գետի հովտի վերին հատվածները: Արագած լեռան շերտավոր հրաբուխը (որը բնութագրվում է վանակատե հրաբխային ապակու խոշոր հանքավայրերով, որոնք լայնորեն օգտագործվել են նախապատմական գործիքներ պատրաստելու համար): Ծրագրի տարածքից երևում են Արտենի և Դմախար լեռները, ինչպես նաև ժայթքման այլ կենտրոններ:

Մորֆոլոգիական կառուցվածքը բնութագրվում է բարձր և ցածր սարերով (որոնք բնորոշ են կենտրոնական Հայաստանի նախալեռնային գոտիներին) և ձևավորված առաջացող սեզոնային ջրահոսքերով կտրված խորը կիրճերով: Դրանք ձևավորվել են ուշ պլեյստոցենի և վաղ հոլոցենի դարաշրջանում, դրանց զարգացումը շարունակվում է մինչ օրս: Չնայած դրան, մակերևութային ջրեր գործնականում չկան, քանի որ դրանք անմիջապես ներծծվում են ծակոտկեն և ճեղքավոր հրաբխային ստրուկտուրաների մեջ:

Երկար ժամանակ լանջերի ինտենսիվ հողմահարումը զգալի դեր է խաղացել տեղական մշակութային ժառանգության ձևավորման և զարգացման գործում: Հրաբխային տուֆը և տարբեր տեսակի բազալտներն և դացիտները ծառայել են որպես շինանյութի աղբյուր: Սա նպաստել է մարդածին տարրերի՝ բնական կառուցվածքների հետ միաձուլմանը՝ այնպիսի կառույցների տեսքով, ինչպիսիք են որսադարանները, աշտարակները, պարիսպները (ներփակված տարածքները) և դամբանաբլուրները:

### Նախկինում իրականացված հնագիտական հետազոտություններ

Մինչև «Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամի և իսպանական «Cortes Arqueologia» հնագիտական կազմակերպության կողմից 2021-2022 թվականներին իրականացված հետազոտությունը, ուսումնասիրվող տարածքում նախկինում հայտնի որևէ հնագիտական հետազոտություն չի իրականացվել: Սա բացատրում է ակս տարածքում փաստագրված ժառանգության բացակայությունը և նշանակում է, որ տարածքը հնագիտական տեսանկյունից լավ ուսումնասիրված չէ:

### Պահպանված հնագիտական տարրեր

Ակնկալվում է, որ Ծրագրի ազդեցության գոտում և ուսումնասիրվող տարածքում պահպանված հնագիտական տարրերը լավ որակի կլինեն: Խորհրդային ժամանակաշրջանում (մինչև 1991 թվականը) ուսումնասիրվող տարածքի անմիջական հարևանությամբ, սակայն, իրականացվել են լայնածավալ բուլղոգերային աշխատանքներ, հատկապես Ծրագրի տարածքի հարավային հատվածից արևմուտք և հյսիսային հատվածից անմիջապես հյուսիս: Արբանյակային պատկերները ցույց են տալիս, որ այդ տարածքներում առկա է Ծրագրի կառուցապատման տարածքի սահմանի 100 մետրանոց բուլՖերային գոտու հետ աննշան համընկնում, և այդ տարածքում, հավանաբար կհեռացվեն մշակութային ժառանգության բոլոր վերգետնյա ռեսուրսները:

Այս վայրում այլ նոր շինարարական աշխատանքներ չեն իրականացվել: Դրանից բացի, Էրոզիայի հետևանքով շատ տարածքներում թեթև նստվածքների հեռացման արդյունքում գետնի մակերևույթը «նստել» է՝ թողնելով միայն ավելի ծանր առարկաներ, այդ թվում՝ հնագիտական իրեր: Սա բացառում է առարկաները շերտագրական կտրվածքում ըստ իրենց գտնվելու վայրի թվագրելու հնարավորությունը:

### Մշակութային ժառանգության օբյեկտներն ըստ տեղամասերի

**Հավելված 1-ը** ներկայացնում է ԲՍԱԳ-ի ուսումնասիրվող տարածքում գտնվող բոլոր 170 օբյեկտների և դրանց գնահատված մշակութային ժառանգության արժեքը/նշանակությունը: Ծրագրի ազդեցության գոտում ֆիզիկական ժառանգության օբյեկտների տեսակների ընդհանուր դասակարգումը (ընդհանուր առմամբ 145 օբյեկտ) ըստ Ծրագրի տեղամասերի ներկայացված է ստորև բերված աղյուսակում:


Ծրագրի տեղամասերի համարակալումը տե՛ս **Նկար 3-ում**:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ մշակութային ժառանգության այն օբյեկտները, որոնք գտնվում են Ծրագրի ազդեցության գոտու սահմաններից դուրս (սակայն 100 մետրանոց բուլՖերային գոտու սահմաններում) ներառված չեն:

Աղյուսակ 3. Ֆիզիկական ժառանգության օբյեկտների տեսակները ըստ Ծրագրի տեղամասերի


Օբյեկտի տեսակը	Տեղամաս 1	Տեղ. 2	Տեղ. 3	Տեղ. 4	Տեղ. 5	Տեղ. 6	Ընդամենը
Վանակատե իրերի կուտակումներ			1		1		2
Պաշտամունքային կառույց		2					2
Ներփակված տարածք						2	2
Ցանկապատ (պարիսպ)	2	4	8	2	3	2	21
Պարիսպներ			1				1
Խաչքար			1				1
Որսադարան	1		1		1		3
Ամբողջական որսադարան			1				1
Քարացրոն					4		4

Ժայռապատկեր				1			1
Հավանական (թաքնված) դամբարան		1			1		2
Հավանական դամբարան	5	1					6
Բնակավայր		1	1		3	3	8
Կառույց (շինություն)	2	1		1	1		5
Դամբանաբլուր	5	3	2	1	8	3	22
Դամբարաններ					1		1
Աշտարակ	1		4				5
Աշտարակ և ներփակված տարածք			1				1
Աշտարակ և պատաշար			1				1
Պատաշար					1	2	3
Պատաշարի հատված	5	8	14	9	7		43
Պատաշարի հատված և ներփակված տարածք						1	1
Պատաշարի հատված և աշտարակ				1			1
Պատաշարի հատվածներ	3	4					7
Պատաշարի հատվածներ աշտարակի հետ միասին		1					1
<b>Ընդամենը</b>	<b>24</b>	<b>26</b>	<b>36</b>	<b>15</b>	<b>31</b>	<b>13</b>	<b>145</b>



Նկար 3 Ծրագրի տեղամասի հատակագիծը, որը ցույց է տալիս Ծրագրի տեղամասերի համարակալումը

#### 4.1.1 Տեղամաս 1




Նկար 4 Ցույց են տրված Տեղամաս 1-ի օբյեկտները («Lidar» արբանյակային պատկերների բազայից ստացված)

Ամենահյուսիսային տեղամասը՝ Տեղամաս 1-ը բնութագրվում է ոչ մեծ չափի օբյեկտներով: Մի շարք պարսպապատ կառույցներ և դամբանաբլուրներ հավասարաչափ տարածված են տարածքում: Կա աշտարակ և որսադարանի օբյեկտ՝ պատերով/պատաշարի հատվածներով:



Նկար 5 Օբյեկտ#109 . Անհայտ նշանակության կառույց 1-ին տեղամասում

#### 4.1.2 Տեղամաս 2




Նկար 6 Տեղամաս 2-ի օբյեկտները («Lidar» արբանյակային պատկերների բազայից ստացված)

2-րդ տեղամասը գտնվում է Ծրագրի տարածքի հյուսիս-արևմուտքում: Այն ներկայացված է տարբեր տեսակի օբյեկտներով, ներառյալ բնակավայր, ներփակված տարածքներ/շինություններ, դամբանաբլուրներ և աշտարակներ: Օբյեկտներն, ընդհանուր առմամբ, հավասարաչափ տարածված են ամբողջ տարածքում:



Նկար 7 Օբյեկտ #120 Դամբանաբլուր 2-րդ տեղամասում

### 4.1.3 Տեղամաս 3




Նկար 8 Տեղամաս 3-ի օբյեկտները («Lidar» արբանյակային պատկերների բազայից)

3-րդ տեղամասը զբաղեցնում է մեծ տարածք, որը գտնվում է Ծրագրի տարածքի կենտրոնում: Այն պարունակում է մեծ թվում ներփակված տարածքներ, բնակավայր, որսադարան, մի քանի աշտարակներ և պատաշարեր/պատաշարի հատվածներ: Այստեղ են գտնվում նաև մի քանի դամբանաբլուրներ և ժամանակակից մեկ խաչքար:



Նկար 9 Օբյեկտ#130. Որսադարանի հետքեր 3-րդ տեղամասում

#### 4.1.4 Տեղամաս 4



Նկար 10 Տեղամաս 4-ի օբյեկտները («Լիդար» արբանյակային պատկերներ)


Տեղամաս 4-ն ընդգրկում է Ծրագրի ամենափոքր տարածքը: Գտնվելով Ծրագրի տարածքի արևմտյան կողմում, այն ունի մեծ թվով պատաշարի հատվածներ: Այստեղ կա նաև մեկ շինություն և ներփակված տարածք, մեկ աշտարակ և մեկ ժայռապատկեր: Օբյեկտները հիմնականում տեղակայված են 4-րդ տեղամասի արևելքում, հավանաբար դրա արևմտյան կեսում իրականացված ժամանակակից հողամշակման աշխատանքների արդյունք է:



Նկար 11 Օբյեկտ#142. Անհայտ նշանակության կառույց (շինություն) 4-րդ տեղամասում



#### 4.1.5 Տեղամաս 5



Նկար 12 Տեղամաս 5-ի օբյեկտները («Lidar»-ի արբանյակային պատկեր)

5-րդ տեղամասում մշակութային ժառանգության գործունեության բազմաթիվ հետքեր կան: Տեղամասում կան քարի/վանակատի ցրոնների բազմաթիվ տարածքներ, մի քանի դամբանաբլուր և ներփակված տարածքներ և բնակատեղիներ: Թիվ 152 օբյեկտը գտնվում է 5-րդ տեղամասի կենտրոնում, բնակավայրերի խոշոր համալիր, որը հնարավոր է եղել շրջանցել Ծրագրի սահմանների և դասավորության փոփոխության արդյունքում: 5-րդ տեղամասում կան նաև կիրճերի միախառնում, ինչը մեծացնում է անցյալում դրա օգտագործման և այդտեղ գործունեության ծավալման հավանականությունը:




Նկար 13ա) Օբյեկտ #156. Բնակավայր Տեղամաս 4-ում



Նկար 13բ) Օբյեկտ#146. Դամբանաբլուրների շարք Տեղամաս 4-ում

#### 4.1.6 Տեղամաս 6



Նկար 14 Տեղամաս 6-ի օբյեկտները («Lidar»-ի արբանյակային պատկերներ)

6-րդ տեղամասը գտնվում է Ծրագրի հարավային մասում, որտեղ օբյեկտները հավասարապես տարածված են ամբողջ տարածքում: Տարածքում կան դամբանաբլուրների, ներփակված տարածքների և բնակավայրի հետքեր, ընդ որում, վերջինը տարածված է ընդարձակ տարածքում:



Նկար 15 Օբյեկտ#165 . Բնակավայրի օբյեկտ Տեղամաս 6-ում

#### 4.2 ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺՈՒԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մշակութային ժառանգության ոչ նյութական օբյեկտների հայտնաբերման հետ կապված՝ նախագծման ողջ ընթացքում անցկացված մի շարք հանդիպումների ժամանակ իրականացվել են լայնամասշտաբ խորհրդակցություններ ազդակիր տեղական համայնքների հետ, որին հաջորդել էր տեղի ազգագրագետի կողմից ԲՍԱԳ-ին կցված ուսումնասիրությունը, երբ

լրացուցիչ խորհրդակցություններ անցկացվեցին տեղական համայնքների անդամների հետ: Այդ խորհրդակցությունների արդյունքում Ծրագրի տարածքում բացահայտված ոչ նյութական ժառանգության միակ օբյեկտը 1990-ականների սկզբին զոհված տեղի բնակչի հուշարձան է՝ #141 օբյեկտը:

## 5 ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

### 5.1 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

#### 5.1.1 Ազդեցություններն ըստ տեղամասի

2023 թվականին կատարված ԲՍԱԳ-ի<sup>12</sup> արդյունքներով, հաշվի առնելով 2023 թվականի օգոստոսին կազմված վերջին նախագիծը և մինչև մեղմացման որևէ միջոցառման իրականացումը, բացահայտվել է մշակութային ժառանգության, ընդհանուր առմամբ, 59 օբյեկտ, որոնք Ծրագրի իրականացման հետևանքով կրելու են ավելի քան չնչին ազդեցություններ (57-ը՝ միջին, իսկ 3-ը՝ փոքր ազդեցություն): Դրանք թվարկված են **Հավելված 1-ում** ներկայացված տեղեկագրում:

Մասնագետների գնահատմամբ՝ նախքան մեղմացման որևէ միջոցառման իրականացումը, այդ ազդեցություններից 10-ը կունենան «չափավոր» հետևանք, իսկ 45-ը՝ աննշան հետևանք: Գնահատումը հաշվի է առնում ազդեցությունը և օբյեկտի արժեքը/նշանակությունը:

«Չափավոր» հետևանք ունեցող այս 10 ազդեցությունները, նախքան մեղմացման միջոցառումները, ներկայացված են «Մեղմացման միջոցառումների ընդհանուր քարտեզի» վրա (**Հավելված 2**) և հետևյալն են՝

Աղյուսակ 4 «Չափավոր» հետևանքներով ազդեցություններ կրող օբյեկտներ

Տեղ No:	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Ծրագրի տեղամաս
3	Հնարավոր դամբարան	Դամբարանային կառույց կամ դամբարան հիշեցնող քարակույտ փոքրիկ ձորակի աջ կողմում	1
17	Պաշտամունքային կառույց	Կլորաձև ցանկապատ բազալտային ստրուկտուրայի շուրջ: Ժամանակաշրջանն ու նշանակությունը անորոշ են: Հավանաբար ծիսական նշանակություն ունի:	2
19	Պաշտամունքային կառույց	Կլորաձև ներփակված տարածք բազալտային լավայից առաջացած բնական բլրի գագաթի շուրջը: Ժամանակաշրջանն ու նշանակությունը անորոշ են: Հավանաբար ծիսական նշանակություն ունի: Հնարավոր է նաև, այս օբյեկտում կա թաքնված դամբարան:	2
79	Ներփակված տարածք	Բազալտե մեծ բլուկներից կազմված՝ ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է նախորդ միավորի (No.182) հարևանությամբ: Այն, ըստ երևույթին, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի պատաշարի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:	3
55	Ներփակված տարածք	Ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը, հավանաբար, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:	3
66	Ներփակված տարածք	Ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է փոքր բլրի հյուսիսային լանջին: Այն, ըստ երևույթին, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի հետ:	4
87	Ներփակված տարածք	Բազալտե մեծ բլուկներից կազմված՝ ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է նախորդ միավորի (No.200)	5


<sup>12</sup> ԲՍԱԳ, 2023թ. սեպտեմբեր: Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման հաշվետվություն, «Այգ-1 200ՄՎտ ՖՎ կայան, Հայաստան, Alvis ESG Consulting (կազմվել է «Abu Dhabi Future Energy» («Մասդար») ընկերության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պատվերով)

		հարևանությամբ: Այն, ըստ երևույթին, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի պատաշարի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:	
89	Վանակատե իրերի կուտակումներ	Վանակատե իրերի կուտակումներ սահմանափակ տարածքում, որոնք պատկանում են Նեոլիթ-Էնեոլիթի դարաշրջանին և բրոնզե դարին:	5
166	Ներփակված տարածք	Ներփակված տարածք: Ժամանակաշրջանն ու նշանակությունը հայտնի չեն: Համակարգը, հավանաբար, արտավայրային լանդշաֆտի տարր է:	6
202	Ներփակված տարածք	Ներփակված մեծ տարածք, որը, հնարավոր է, դեպի ավելի հյուսիս-արևելք բնակավայրի մաս է կազմում:	6

Մշակութային ժառանգության կառավարման սույն պլանում նշված առաջարկվող մեղմացման միջոցառումների իրականացման դեպքում, հաշվի առնելով 2023 թվականի օգոստոսին կազմված վերջին նախագիծը, «չափավոր» հետևանքներ ունեցող այս ազդեցությունները կդառնան «աննշան» հետևանք ունեցող ազդեցություն (մնացած բոլորը չնչին հետևանք կունենան մեղմացման միջոցառումներից հետո):

### 5.1.2 Ծրագրի ազդեցության գոտուց դուրս գտնվող օբյեկտներ

ԲՍԱԳ-ի ուսումնասիրվող տարածքում (և հետևաբար տեղեկագրում) կան մշակութային ժառանգության նշանակության մի շարք վայրեր, որոնք գտնվում են Ծրագրի ազդեցության գոտուց դուրս, բայց 100 մետրանոց բուֆերային գոտու սահմաններում: Թեև դրանք ներառված չեն գնահատում կամ վերահսկում նախատեսվող մեղմացման միջոցառումներում, դրանք կներառվեն ցանկապատում և ցուցանակների տեղադրում նախատեսող մեղմացման միջոցառումներում՝ նախագծի փոփոխության կամ ավելի ուշ ժամանակավոր/օժանդակ շինարարական տարրերի (օրինակ՝ ժամանակավոր տեխնոլոգիական ճանապարհներ կամ կյութերի պահեստավորման տարածքներ) ստեղծման դեպքում: Նշված վայրերը պատկերված են ստորև ներկայացված **Նկար 16-ում** և ներառում են հետևյալ օբյեկտները #5, 11, 21, 34, 36, 41, 43, 45, 48, 49, 57, 61, 80, 81, 82, 95, 102, 123, 124, 138, 143, 159, 164, 169, 170:



Նկար 16 Ծրագրի հարևանությամբ գտնվող մշակութային ժառանգության օբյեկտները


### 5.1.3 Ուսումնասիրվող տարածքից դուրս գտնվող օբյեկտները

Կան նաև մի շարք օբյեկտներ, որոնք գտնվում են ԲՍԱԳ-ի ուսումնասիրվող տարածքից դուրս, բայց Ծրագրի նախագծման արդյունքում գտնվում են Ծրագրի տարածքին շատ մոտ կամ շրջապատված են դրանով: Դրանք ներկայացված են ստորև Նկար 17-ում և ամփոփված են հետևյալ կերպ:

Օբյեկտի տեսակը	Օբյեկտի թիվը
Պաշտամունքային օբյեկտ (պատաշարեր և ներփակված տարածքներ)	1
Ներփակված տարածք	1

Ներփակված տարածքներ և աշտարակներ	1
Ամբողջական որսադարան	1
Հավանական դամբարաններ	3
Ներփակված տարածքների համակարգեր	1
Դամբանաբլուր	2
Դամբանաբլուրներ և հավանական դամբարաններ	1
Աշտարակ	1
Պատաշար	1
Պատաշարի հատված	5
Պատաշարի հատված ներփակված տարածքի հետ միասին	2
Պատաշարի հատվածներ	2
<b>Ընդամենը</b>	<b>22</b>

Քանի որ այդ օբյեկտները չեն գտնվում որևէ պլանավորված շինարարության կամ շահագործման տարածքներում, մեղմացման հատուկ միջոցառումներ չեն պահանջվում: Այս օբյեկտների քարտեզը կտրամադրվի ՆԳՇ-ի կապալառուներին և ՄԺՊ-ին՝ այդ օբյեկտների վերաբերյալ իրազեկությունն ապահովելու համար: Կարևոր է, որ դրանց գոյությունը հայտնի լինի, և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով դրանց գտնվելու վայրը ցույց տրվի քարտեզի վրա:



Նկար 17 Մշակութային ժառանգության օբյեկտները Ծրագրի տարածքի հարևանությամբ, բայց 100մ բուժերային գոտուց դուրս

#### 5.1.4 Ոչ Նյութական

Ծրագրի տարածքում միակ ոչ նյութական նշանակություն ունեցող օբյեկտը #141 օբյեկտն է, որը 1990-ականների սկզբին զոհված տեղի բնակչի հիշատակին կանգնեցված խաչքար է:

### 5.2 ՄԻՆՁԵՎ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևելով Ծրագրի քաղաքականությունն ու չափորոշիչները սահմանող ֆինանսական հաստատությունների պահանջներին՝ կիրառվում է «մեղմացման միջոցառումների հիերարխիայի» հետևյալ մոտեցումը.

- i) **խուսափել ազդեցություններից Ծրագրի նախագծման միջոցով** (մշակութային ժառանգության ռեսուրսների պահպանում տեղում), և/կամ
- ii) **Նվազագույնի հասցնել ազդեցությունը** (օր.՝ տեղափոխելով/հարմարեցնելով Ծրագրի օբյեկտները), և/կամ
- iii) **Մշտադիտարկել եւ արձանագրել մշակութային ժառանգության ազդակիր հատվածը** օբյեկտի տեսակին բնորոշ մեթոդների միջոցով (օրինակ՝ նմուշառման, գնահատման, ֆոտոարձանագրման, եռաչափ մոդելավորման կամ մինչ շինարարությունը իրականացվող պեղումների միջոցով)
- iv) **Մշակութային ժառանգության ազդակիր ռեսուրսների ամբողջական փաստագրում** մինչև շինարարությունն իրականացվող պեղումների և/կամ այլ միջոցներով:

Ազդեցությունների հնարավոր եղավ խուսափել հիմնական հետևյալ միջոցառումների իրականացման շնորհիվ.

- i) «Ծրագրի նախագծման միջոցով ազդեցություններից խուսափում» միջոցառումն իրականացվել է նախագծային մի շարք փոփոխությունների, ինչպես նաև նախագծողների և մշակութային ժառանգության մասնագետների միջև խորհրդակցությունների միջոցով: Այս միջոցառումն իրականացվել է հայտնաբերված բոլոր առավել խոցելի օբյեկտների համար, որոնց վրա ազդեցությունն ավելի բարձր մակարդակ ուներ:
- ii) Այն օբյեկտների դեպքում, որոնք հնարավոր չէր ամբողջությամբ շրջանցել, ազդեցությունը նվազագույնի է հասցվել՝ փոքր շտկումներ կատարելով ՖՎ վահանակների տեղադրման վայրում՝ հնագիտական օբյեկտների արտաքին/ծայրամասային տարածքների վրա ազդեցությունը սահմանափակելու նպատակով:

Նախագծման միջոցով ժառանգության օբյեկտների վրա ազդեցություններն ամբողջությամբ շրջանցել հնարավոր չէր՝ պայմանավորված անցյալում մարդու գործունեության մնացորդների տարածված բնույթով, ռեյտեֆի սահմանափակումներով և Ծրագիրը շահավետ դարձնելու համար էլեկտրաէներգիայի արտադրության որոշակի շեմեր բավարարելու անհրաժեշտությամբ: Նախագծող խմբի հետ սերտ համագործակցություն և խորհրդակցություններ են իրականացվել տեղամաս շրջայցերի/հետազոտությունների և նախագծման գործընթացի ողջ ընթացքում: Մշակութային ժառանգության մնացած մի քանի օբյեկտների/տարրերի դեպքում, որտեղ ազդեցությունից հնարավոր չէ խուսափել նախագծման միջոցով, ազդեցությունը նվազագույնի է հասցվել և կիրառվել են մեղմացման համաչափ մոտեցումներ:



Մեղմացման առավել նպատակահարմար և արդյունավետ գործողությունները վերը նշված (iii) և (iv) միջոցառումների դեպքում մեծապես կախված են օբյեկտի բնույթից, որը կարող է դասակարգվել որպես կառուցված (վերգետնյա) մշակութային ժառանգության կամ ստորգետնյա (թաղված) հնագիտական օբյեկտ, տե՛ս ստորև Բաժին **Error! Reference source not found.**:

Այս երկու կատեգորիաների շրջանակում օբյեկտի տեսակը և այն պոտենցիալը, որն օբյեկտը կամ տեղամասն ունեն հնագիտական կամ մշակութային ժառանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ապահովելու համար, նույնպես օգնում են որոշել մեղմացման կոնկրետ մոտեցումը:

Միջև շինարարությունը նախատեսված մեղմացման միջոցառումների հետևյալ տեսակները կարելի ամփոփել հետևյալ կերպ.

- Գնահատում (առկա հնագիտական մնացորդների բնույթի, մասշտաբների ու նշանակության մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար)
- Մշակութային ժառանգության վերգետնյա օբյեկտների ֆոտոգրամետրիա, որը ներառում է ա) ամբողջ օբյեկտի բարձր մակարդակի փաստագրում նախքան շինարարությունը սկսելը՝ հնագիտական լանդշաֆտի ամբողջական հաշվառումն ապահովելու համար, և բ) այն 10 օբյեկտների մանրամասն ֆոտոգրամետրիան, որոնց վրա զգալի ազդեցություն է հայտնաբերվել միջև մեղմացման միջոցների ձեռնարկումը (մշակույթի նախարարության պահանջներին համապատասխան):
- Թաղված հնագիտական օբյեկտների հետազոտություն (պեղումներ՝ նախքան շինարարությունը մեղմացնելու համար)
- Տրանսպորտային միջոցների կառավարման պլան՝ շինարարության ընթացքում տրանսպորտային միջոցների մերձատար ուղիները որոշելու համար:
- Ցանկապատեր, ցուցանակներ և բուֆերային գոտիներ՝ մշակութային ժառանգության օբյեկտների մասին իրազեկվածության բարձրացման և պահպանության նպատակով:

### 5.2.1 Գնահատում (նախքան շինարարությունը)

Ենթադրվում է, որ նախատեսվող աշխատանքները ազդեցություն կունենան հնագիտական տեսանկյունից խոցելի մեկ ներփակված տարածքի վրա (օբյեկտ #55), քանի որ դրա տեղադիրքն գտնվում է նախատեսվող ենթակայանի և պահեստավորման տեղամասի տարածքում: Այս օբյեկտի համար կպահանջվի երկու նպատակային հետախուզական խրամափոսերի փորում:

Հնագիտական գնահատումը նախնական դաշտային հետախուզության փուլ է, որը տրամադրում է տեղեկատվություն առկա հնագիտական մնացորդների բնույթի, մասշտաբների և նշանակության մասին: Ստացված արդյունքն օգնում է որոշել հետագա հնագիտական աշխատանքների անհրաժեշտությունն ու ծավալը, որոնք կարող են պահանջվել կառուցապատման հետ կապված: Արդյունքների մասին անհապաղ կտեղեկացվի, և անհրաժեշտության դեպքում կներկայացվեն համապատասխան իրատեսական առաջարկություններ ազդեցությունների մեղմացման հետագա աշխատանքների վերաբերյալ: Սա կարող է ներառել հետախուզական խրամափոսերի փորում կամ, հնարավոր է, մշակութային ժառանգության ազդակիր ռեսուրսների ամբողջական փաստագրում՝ նախքան շինարարությունը սկսելը պեղումների միջոցով:

Գնահատումները, մասնավորապես, պետք է կատարվեն նախապես, նախքան հողային աշխատանքները սկսելը, ինչը թույլ կտա մեղմացման դաշտային աշխատանքներ (և հետագա մեղմացման ցանկացած պահանջ) իրականացնել նախքան շինարարությունը սկսելը:

## 5.2.2 Մեղմացման միջոցառումներ

### 5.2.3 Վերգետնյա/կառուցված ժառանգություն (նախքան շինարարությունը)

Մշակութային ժառանգության վերգետնյա/կառուցված օբյեկտների դեպքում, շինարարությունից առաջ ժառանգության ռեսուրսը փաստագրելու համար, անկախ ազդեցությունից կամ դրա բացակայությունից, կիրականացվի ֆոտոգրամետրիայի միջոցով գրանցում: Սա բաղկացած է կոնկրետ տարածքի կամ իրի տվիչից ստացված և մի շարք համընկնող տեղորոշված պատկերներից, որոնք եռանկյունաչափության միջոցով համադրվում են համադրվում են ընդհանուր համընկնման կետերի հետ եռաչափ տիրույթում: Արդյունքում ստեղծվում է օբյեկտի մանրամասն մոդել, որը փաստագրումը օբյեկտը շատ ավելի մանրամասն և շատ ավելի կարճ ժամանակում, քան հնարավոր է ձեռքով: Ֆոտոգրամետրիայի արդյունքում կստացվեն մի շարք մանրամասն տեղեկություններ, ներառյալ աշխարհատարածական/տեղորոշման տվյալներ, լուսանկարներ և եռաչափ մոդելի տվյալներ:

### 5.2.4 Թաղված (ստորգետնյա) հնագիտական օբյեկտներ (նախքան շինարարությունը)

Եթե գնահատման ընթացքում հայտնաբերվեն կարևոր հնագիտական օբյեկտներ, որոնք խախտվելու կամ ոչնչացվելու են շինարարության արդյունքում, ապա մինչև շինարարությունը սկսելը պետք է իրականացվեն խոցելի տարածքների/օբյեկտների պեղումներ դրանց վրա ազդեցության մեղմացման միջոցառումների շրջանակում: Պեղումները պետք է իրականացվեն հաստատված հնագիտական աշխատանքների կապալառուների կողմից՝ ՄԺԴ-ի կողմից պատրաստված և կարգավորող մարմինների կողմից հաստատված մեթոդական ցուցումների համաձայն:

#### 5.2.4.1 Տրանսպորտային միջոցների կառավարման պլան (նախքան շինարարությունը)

ՆԳՇ կապալառուի կողմից մշակված տրանսպորտային միջոցների կառավարման պլանը կսահմանի շինարարության ընթացքում տրանսպորտային միջոցների հանար մերձատար ճանապարհները: Դրանք պետք է խստորեն պահպանվեն («միուղի քաղաքականություն») և հնարավորության դեպքում պետք է խուսափել մշակութային ժառանգության օբյեկտներից: Այն վայրերում, որտեղ կաձանները պետք է հատեն ցածր արժեք ներկայացնող մշակութային ժառանգության օբյեկտները (օրինակ՝ պատերի հատվածները), ապա հատման այդ կետերն անհրաժեշտ է նշել և մշտապես հետևել դրանց: Անհրաժեշտ է հնարավորինս քչացնել պատաշարերի կամ պատաշարերի հատվածների տարածքով անցումները: Այն վայրերում, որտեղ նախատեսվում են հատման կետեր (և, հետևաբար, ազդեցություն պատաշարի փոքր հատվածի կամ քարակույտերի վրա), նախընտրելի է, որ ցանկացած քար /ժայռաբեկոր հեռացնելու փոխարեն տեղադրվի պաշտպանիչ տեքստիլ շերտ ազդակիր ցածրադիր պատաշարի կամ քարերի հատվածի վրա: Սա կօգնի բացահայտել այդ տարածքները և որոշակի պաշտպանություն ապահովել օբյեկտի համար:

Տրանսպորտային միջոցների կառավարման պլանը պետք է սահմանվի ՆԳՇ-ի մոբիլիզացման ընթացքում և նախքան որևէ շինարարություն սկսելը: Այն պետք է մշակվի Ծրագրի տեղամասերում հայտնաբերված մշակութային ժառանգության հայտնի օբյեկտների համատեքստում և ստուգվի Մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուի կողմից նախքան ստորագրումը: Հետևաբար, մշակութային ժառանգության տվյալները պետք է հնարավորինս շուտ հասանելի լինեն տրանսպորտային միջոցների կառավարման պլանը մշակողներին:

Շինարարության ընթացքում Տրանսպորտային միջոցների կառավարման պլանի իրականացման վերահսկողության համար տե՛ս 5.3.2 բաժինը:

#### **5.2.4.2 Ցանկապատերի, ցուցանակների տեղադրում և բուժերային գոտիներ (Նախքան շինարարությունը)**

ԲՍԱԳ-ը փաստաթղթերով հաստատել է ուսումնասիրվող տարածքում (Ծրագրի ազդեցության գոտի + 100մ բուժերային գոտի) գտնվող՝ Նախագծի փոփոխությամբ շրջանցած մշակութային ժառանգության չափավոր արժեք ունեցող օբյեկտների ցանկապատման և կողմնորոշիչ ցուցանակների տեղադրման պահանջը: Դրա նպատակն է ապահովել, որ մշակութային ժառանգության այս օբյեկտները, որոնք փաստագրված են որպես ազդեցության չենթարկվող (կամ ազդեցությունը չնչին է), հստակ տեսանելի լինեն և հնարավոր լինի դրանք շրջանցել շինարարական ծրագրի ողջ ընթացքում: Սա կապահովի, որ մշակութային ժառանգության օբյեկտների վրա պատահական ազդեցություն չլինի:

Ցանկապատերի տեսակը և բուժերային գոտիների համապատասխանելու են տեղամասի բնույթին, օբյեկտի տեսակին և արժեքին (և կախված կլինեն տրանսպորտային միջոցների արդյունավետ կառավարման պլանից), տե՛ս ստորև **Աղյուսակ 5-ը**:

Կոնկրետ օբյեկտի համար անհրաժեշտ ցանկապատերի համար տե՛ս տեղեկագիրը (**Հավելված 1**) և Օբյեկտին բնորոշ մեղմացման միջոցառումների մանրամասն քարտեզները (**Հավելված 3**):

#### Ցանկապատերի տեսակները

Ցանկապատերի ձեռքբերումը և տեղադրումն իրականացվելու է մինչև ԼԳԾ որևէ կապալառուի ժամանումը կամ տեղում շինարարական աշխատանքները սկսելը: Հնագիտական աշխատանքների ղեկավարը, շինարարության ղեկավարը և հնագիտական հարցերով վերահսկիչները կապահովեն, որ ցանկապատերի ու ցուցանակների ճշտությունն ու ճիշտ տեղադրումը:

Ցանկապատերի տեսակը կարող է տարբեր լինել՝ սկսած գետին տեղադրված պլաստիկ ցցերի վրա ամրացած ժամանակավոր, լուսարձակող (յուսմինեսցենտային) պլաստիկ ժապավենից մինչև «Heras» տիպի մետաղական ցանկապատներ, որոնք ավելի դիմացկուն են և ամուր և սովորաբար օգտագործվում են վերելակի հորանների կամ հանքափոսերի և խորը փորվածքների շուրջ տեղադրման համար:

Այս նախագծի նպատակով օբյեկտների ցանկապատումն ու սահմանազատումը պետք է լինեն բավականաչափ ամուր, որպեսզի կարողանան դիմակայել տարերքին, բայց ճկուն՝ քարքարոտ և երբեմն կտրուտ թեք տեղանքների վրա օգտագործելու համար: Չկան նաև անվտանգությանը սպառնացող տարրեր, որոնք կարող են արդարացնել ավելի բարձր «Heras» ցանկապատների անհրաժեշտությունը: Ուստի անդրադարձիչ պլաստիկ ցանկապատները (ցուցանակներով), ուսի բարձրությունից ոչ ավելի, համապատասխան են խոցելիության բարձր մակարդակ ունեցող վայրերի համար:

Ծրագրի ազդեցության գոտուց դուրս (շինարարական աշխատանքներից և տեխնոլոգիական ճանապարհներից 25մ հեռու) գտնվող օբյեկտների և ավելի ցածր խոցելի ավելի մեծ տարածքների համար անդրադարձիչ նշանները, օրինակ՝ դրոշակները, պետք է տեղադրվեն օբյեկտի պարագծով՝ իրարից 10մ հեռավորության վրա, որպեսզի հնարավոր լինի հստակ պարզել դրա սահմանը:

Ծրագրի շահագործման ընթացքում ազդեցության վտանգի տակ գտնվող որոշ օբյեկտների համար նախատեսված այս ցանկապատները և ցուցանակները կմնան իրենց տեղում Ծրագրի կառուցապատման և/կամ շահագործման ողջ ընթացքում: Պարզ է, որ Ծրագրի շահագործման ընթացքում տրանսպորտային միջոցներին և մեքենաներին կարող է անհրաժեշտ լինել երթևեկել արևային ֆոտովոլտային վահանակների համակարգերի միջև: Շահագործման ընթացքում մնացած ցանկապատը ցույց կտա մշակութային ժառանգության վայրերի գտնվելու վայրը և կօգնի պլանավորել երթուղիները՝ մշակութային ժառանգության օբյեկտները շրջանցելու կամ դրանց վրա ազդեցությունից խուսափելու նպատակով:

Յուրաքանչյուր օբյեկտի տեսակի համար անհրաժեշտ ցանկապատների, ցուցանակների և բուժֆերային գոտիների նկատմամբ ընդհանուր մոտեցումը ներկայացված է ստորև **Աղյուսակ 5-ում**:

Ծրագրի ազդեցության գոտուց դուրս և շինարարական աշխատանքներից և տեխնոլոգիական ճանապարհներից առնվազն 25մ հեռու գտնվող օբյեկտների համար որպես ցանկապատ բավարար կլինեն պլաստիկ ժապավենը և ցցերը:

ԼԳՇ կապալառուի վարձած հնագիտական հարցերով վերահսկիչները պատասխանատու են վերը նշված պահանջներին համապատասխան բավարար քանակությամբ և համապատասխան ցանկապատների ապահովման համար: Դրանց վիճակը պետք է պարբերաբար ստուգվի ՄԺԴ-ի կողմից: Վերահսկողությունը պետք է իրականացնի ԼԳՇ կապալառուն, և ցանկացած վնասված կամ սխալ տեղադրված ցանկապատ պետք է հնարավորինս շուտ շտկվի ԼԳՇ կապալառուի կողմից: Ցանկապատի հետ կապված մշտական կամ կրկնվող խնդիրների պարագայում անհրաժեշտ է դիտարկել ցանկապատի ավելի ամուր տեսակը:

*Աղյուսակ 5 Օբյեկտի տեսակը և ցանկապատների, ցուցանակների տեղադրման և բուժֆերային գոտիների առանձնացման միջոցով մեղմացման միջոցառումների պահանջները*

Հայտնաբերված օբյեկտի տեսակը	Օբյեկտների թիվը	Ցանկապատների, ցուցանակների տեղադրում եւ բուժֆերային գոտիներ
Քարե/վանակատե իրերի/գործիքների կուտատումներ	7	<ul style="list-style-type: none"> <li>Վնդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինարարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>5 մ բուժֆերային գոտի</li> <li>Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Շինություն/պաշտամունքային կառույց	8	<ul style="list-style-type: none"> <li>Վնդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինարարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>2 մ բուժֆերային գոտի</li> <li>Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Պարիսպ/ներփակված տարածք	28	<ul style="list-style-type: none"> <li>Վնդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինարարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>2 մ բուժֆերային գոտի</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Խաչքար	1	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինհրապարակից մինչև 25մ հեռավորության վրա է գտնվում)</li> <li>• 3 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Որսադարան/ ամբողջական որսադարան	3	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>• 2 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ,</li> </ul>
Ժայռապատկեր	1	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>• 5 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Դամբանաբլուր/հավանական դամբարան	37	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինհրապարակից մինչև 25մ հեռավորության վրա է գտնվում)</li> <li>• 3 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Բնակավայր	10	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>• 5 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>
Աշտարակ/Աշտարակ և ներփակված տարածք/Պատաշար	12	<ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ պլաստիկ ցանկապատ (եթե շինհրապարակից մինչև 25մ հեռավորության վրա է գտնվում)</li> <li>• 3 մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ,</li> </ul>

		որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից
Պատաշար/Պատաշարի հատված(ներ)	64	<ul style="list-style-type: none"> <li>Ցանկապատի կարիք չկա (պայմանով, որ տրանսպորտային միջոցների կառավարման պլանով ազդեցությունը նվազագույնի է հասցվում)</li> </ul>

### 5.2.5 Ոչ նյութական ժառանգություն

Ինչպես ներկայացվում է 5.1.4 բաժնում, Ծրագրի տարածքի #141 տեղամասում հայտնաբերվել է ոչ նյութական ժառանգության արժեք ներկայացնող խաչքար: Այն անհրաժեշտ է պահպանել ցանկապատման և ցուցանակների տեղադրման միջոցով (տե՛ս [Աղյուսակ 5-ը](#) վերևում): Այդուհանդերձ, դրա ոչ նյութական արժեքի մի մասը կայանում է օբյեկտի հասանելիության մեջ: Պետք է պայմանավորվածություն ձեռք բերել տվյալ անձի ընտանիքի հետ, ում համար կանգնեցվել է խաչքարը, որպեսզի հնարավորություն ապահովվի մոտենալ դրան:

Այս օբյեկտի հասանելիության ապահովման հետ աշխատանքները կհամաձայնեցվեն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, կձևակերպվեն և կիրականացվեն Ընկերության կողմից: Համաձայնեցված հասանելիության մասին կտեղեկացվի ՆԳՇ կապալառուներին, որոնք կապահովեն օբյեկտի անվնաս ներկայությունը և օբյեկտին հասանելիությունը Ծրագրի շինարարական և շահագործման փուլերի ողջ ընթացքում:

## 5.3 ՄԵՐՄԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

### 5.3.1 Թաղված (ստորգետնյա) հնագիտական օբյեկտներ (շինարարության ընթացքում)

Հնագիտական հարցերով վերահսկիչները, ՄԺՊ-ի ղեկավարությամբ, կիրականացնեն շինարարական աշխատանքների մշտադիտարկում այն վայրում, որտեղ որոշվել է աշխատանքների վերահսկողություն իրականացնել: Հենց այստեղ է ԲՍԱԳ-ի արդյունքներով պարզվել, որ շինարարական աշխատանքներն ազդեցություն կունենան բարձր խոցելիության օբյեկտների տեղանքի վրա, իսկ ազդեցության հետևանքը կլինի «չափավոր» կամ «աննշան»: Աշխատանքների վերահսկողություն (հնարավոր օբյեկտները չվնասելու նպատակով) պետք է իրականացվեն հետևյալ օբյեկտների համար՝ #3, #17, #19, #66, #79, #87, #89, #166, #202.

Հնագիտական նյութեր հայտնաբերելու դեպքում աշխատանքները դադարեցնելուց հետո ՄԺՊ-ն կապ կհաստատի մշակույթի նախարարության համապատասխան աշխատակցի հետ և կինդրի շտապ ժամանել օբյեկտ (դա սովորաբար պետք է արվի հայտնաբերումից հետո 48 ժամվա ընթացքում): Մշակույթի նախարարությունը կգնահատի գտածոյի նշանակությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ գործողությունների իրականացման հանձնարարականներ կտա:

Որպես կանոն, սա ներառում է հետևյալ տարբերակներից մեկը.

- Թույլ տալ շարունակել շինարարական աշխատանքները, եթե պարզվի, որ հայտնաբերվածը Էական նշանակություն ունեցող մշակութային ժառանգության օբյեկտ չէ,
- Եթե մնացորդների արժեքն անորոշ է, ապա անկախ և որակավորում ունեցող հնագիտական աշխատանքների կապալառուն պետք է ազդակիր տարածքում իրականացնի հնագիտական մնացորդների հետազոտության 2-րդ փուլը (գնահատում),
- Եթե պարզվի, որ մնացորդները բավականաչափ կարևոր են, որպեսզի դրանց նկատմամբ կիրառվի 3-րդ փուլի մեղամացման միջոցառումը (փաստագրում պեղումների միջոցով), ապա ՆԳՇ կապալառուի ծրագրի ղեկավարի, բնապահպանական աշխատանքների ղեկավարի և Ընկերության ՄԺՊ-ի հետ պետք է քննարկվի նախագծի փոփոխության/շրջանցելու տարբերակը,
- Եթե հնագիտական մնացորդները շրջանցելն անհնար է, ապա հնագիտական աշխատանքների կապալառուի կողմից պետք է իրականացվեն 3-րդ փուլով նախատեսված պեղումներ՝ ՀՀ օրենսդրության պահանջներին և միջազգային ֆինանսական հաստատությունների չափանիշներին համապատասխան:
- Պետք է ներկայացվեն իրականացվող ցանկացած և բոլոր դաշտային աշխատանքների հաշվետվությունները, ներառյալ համապատասխան քարտեզներ, պլաններ, գտածոյի վերլուծության, շերտագրական վերլուծության արդյունքները և եզրակացությունները:

Հնագիտական հարցերով վերահսկիչը շաբաթական հաշվետվություններ կներկայացնի, որոնք կուղարկվեն Ընկերությանը (ՄԺՊ-ին), կապալառուներին և ՄՖՀ-ների համապատասխան ներկայացուցիչներին: Հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

- Շաբաթվա ընթացքում կատարված ցանկացած հնագիտական տարրի դիտարկում, ներառյալ տեղեկություններ օբյեկտի/արտեֆակտի տեսակի, գտնվելու վայրի, մասշտաբի, ամսաթվի և կարևորության մասին,
- Հնագիտական մնացորդների հայտնաբերման արդյունքում ձեռնարկված գործողությունների վերաբերյալ առաջարկություններ/սկարագրություն,
- Շինարարական նախագծի կամ ազդեցության ցանկացած փոփոխության ամփոփում,
- Նախագծի ցանկացած փոփոխության հետևանքով հավանական ազդեցության գնահատում
- Նախագծի փոփոխությունների հետևանքով ազդեցություն կրած մշակութային ժառանգության ցանկացած օբյեկտի պահպանմանն ուղղված գործողությունների վերաբերյալ առաջարկություններ,
- Նախորդ շաբաթվա ընթացքում իրականացված վերականգնողական/պահպանման ցանկացած միջոցառման սկարագրություն,
- Շինարարական/մոնտաժային աշխատանքների աշխատանքների իրականացման վայրերում աշխատանքների ընթացքի կանոնավոր օդային լուսանկարահանում (դրոններով),
- Հաստատում առ այն, ցանկապատվող և գծանշվող տարածքները պատշաճ կերպով պաշտպանված են, և նախատեսվող ցանկապատների/ցուցանակների կատարվող ունեցող ցանկացած փոփոխություն:

ԱԹՍ-ով լուսանկարահանումները պետք է պարբերաբար իրականացվեն և լուսանկարները փոխանցվեն պատվիրատուին, կապալառուներին և ՄՖՀ-ներին՝ ցույց տալու հողային աշխատանքների ծավալները: Որևէ արժեքավոր հնագիտական նյութ հայտնաբերելու դեպքում պետք է կատարել համապատասխան ֆոտոարձանագրում՝ շինարարական աշխատանքները դադարեցնելու որոշում և հիմնավորելու համար:

### 5.3.2 Վերգետնյա/կառուցված ժառանգություն (շինարարության ընթացքում)

#### **Մերձատար ճանապարհներ**

ՆԳՇ կապալառուի շինարարության աշխատանքների ղեկավարը կպարզի և կտեղեկացնի ՄԺԴ-ին և հնագիտական հարցերով վերահսկիչին, թե որտեղ է անհրաժեշտ հեռացնել մշակութային ժառանգություն չներկայացնող ցածրադիր պատերը կամ քարակույտը՝ շինհրապարակ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժն ապահովելու համար: Թեև Ծրագրի ազդեցության գոտում ոչ բոլոր պատերն են որոշվել որպես պատմական կամ մշակութային արժեք ներկայացնող, այնուամենայնիվ դրանք նախ պետք է ստուգվեն և համաձայնեցվեն ՄԺԴ-ի հետ: Պատի, պատաշարի հատվածը կամ քարերը տեղափոխելու անհրաժեշտության դեպքում նյութի ծավալն ու քանակը պետք է նվազագույնի հասցվի, ազդակիր ցածրադիր պատի կամ քարակույտի տարածքի վրա պետք է տեղադրվի տեքստիլի պաշտպանիչ շերտ: Հնարավորության դեպքում տեքստիլը պետք է տեղադրվի մեքենաների անցուղիների վրա, և նախընտրելի չէ հեռացնել պատը կամ քարերը:

Այս վայրերը պետք է պարզի ՆԳՇ կապալառուի շինարարության աշխատանքների ղեկավարը դրանց ստեղծումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Դրանք պետք է հաստատվեն ՄԺԴ-ի և մշտադիտարկվեն հնագիտական հարցերով վերահսկիչի կողմից: Տրանսպորտային միջոցների կառավարման պլանի հետ կապված ցանկացած խնդրի կամ պլանից ցանկացած չհամաձայնեցված շեղման մասին պետք է տեղեկացվի ՄԺԴ-ին և ՆԳՇ կապալառուի շինարարական աշխատանքների ղեկավարին:



Ընդունված կարծիք կա, որ այս գործընթացը պահանջում է որոշակի ճկունություն, և որ տրանսպորտային միջոցների անցուղիներ կարող են ժամանակավորապես պահանջվել: Ուստի այս գործընթացը կիրականացվի շինարարության մոնիթորինգի ծրագրի ողջ ընթացքում:

#### **Ֆ4 վահանակների հենասյուներ**

Շինարարության ընթացքում ազդեցությունը նվազագույնի հասցնելու (օրինակ՝ տեղափոխելով /հարմարեցնելով Ֆ4 վահանակների հենարանները) և/կամ մշակութային ժառանգության վերագետնյա տարրերը շրջանցելու նպատակով հնագիտական հարցերով վերահսկիչը ՄԺՊ-ին և ՆԳՇ կապալառուին ցույց կտա, թե որտեղ է, հավանաբար, տեղակայվելու արևային Ֆ4 վահանակի հենասյունը անմիջապես մշակութային ժառանգության վերագետնյա տարրի վրա (օր.՝ պատաշարի հատված կամ ներփակված տարածքի սահման) և չի կարող այն այլ կերպ հարմարեցվել: Ներկայումս հենասյուների ճշգրիտ տեղադիրքը հայտնի չէ, բայց հասկանալի է, որ դրանց ճշգրիտ տեղակայման հարցում կա մի փոքր ճկունություն:

Նման դեպքում հնագիտական հարցերով վերահսկիչը կարծանագրի տվյալ հենասյան ճշգրիտ տեղադրությունը և դրա տեղափոխման անհնարիտության պատճառները և կփոխանցի ՄԺՊ-ին և բնապահպանական աշխատանքների ղեկավարին: Գետնի մակերևույթին կառուցած մշակութային ժառանգության օբյեկտների մեծամասնությունը ցածրադիր պատեր են կամ քարակույտ, որոնք ժամանակին ավելի ամբողջական կառույց են եղել, սակայն հետո քայքայվել են կամ ընկել այս ու այն կողմ: Այնուամենայնիվ, հնագիտական հարցերով վերահսկիչը պետք է կանոնավոր դիտազննումներ կատարի շինարարական աշխատանքների հարևանությամբ գտնվող մշակութային ժառանգության վերագետնյա տարրերի շրջակայքում և դադարեցնի աշխատանքը՝ կառույցի էական վնասման կամ խախտման դեպքում: Այդ դեպքում շինարարության ընթացքում մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուն անմիջապես պետք է հանձնարարի դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնի ՄԺՊ-ին և ՆԳՇ կապալառուների շինարարական և բնապահպանական աշխատանքների ղեկավարներին, որ շինարարական աշխատանքները դադարեցվել են մինչև կառույցի վնասի ուսումնասիրությունը:

ՄԺՊ-ն կտեղեկացնի մշակույթի նախարարությանը, եթե վնասը բավականաչափ զգալի է: Մշակույթի նախարարությունը կգնահատի հայտնաբերված վնասի զգալիությունը և 33 օրենսդրությանը համապատասխան և պատշաճ արձագանքման հանձնարարականներ կտա:

#### **5.3.3 Նախագծի փոփոխություններ**

Շինարարության ընթացքում նախագծի ցանկացած փոփոխություն (նոր արևային Ֆ4 վահանակների, օդերևութաբանական կայանների տեղադրում կամ տեղափոխում կամ ներքին ճանապարհների կառուցում կամ տեղափոխում) կամ նախատեսվող ժամանակավոր աշխատանքներ, օրինակ՝ տեխնոլոգիական ճանապարհների, հողի պահեստավորման տարածքների նախատեսում և այլն, պետք է նոր հնագիտական գնահատման ենթարկվի՝ մշակութային ժառանգության օբյեկտների կամ հնագիտական խոցելի տարածքների վրա հնարավոր ազդեցության առկայությունը պարզելու համար: Կապալառուն պարտավոր է ապահովել, որ ՄԺՊ-ն, բնապահպանական աշխատանքների ղեկավարը և հնագիտական աշխատանքների կապալառուն/վերահսկիչները նախապես տեղեկացվեն նման աշխատանքների մասին: Դրանք պետք է ներկայացվեն քարտեզներով, որոնք ցույց են տալիս նախատեսվող ազդակիր տարածքը և շրջակայքում գտնվող մշակութային ժառանգության ցանկացած հայտնի օբյեկտ: Գնահատման հիման վրա պետք է ներկայացվեն առաջարկություններ, որոնք հավանաբար կներառեն հետևյալ տարբերակներից մեկը:

- Եթե պարզվի, որ Նախագծի փոփոխությունը կազդի հնագիտական նշանակություն ունեցող օբյեկտի վրա, ապա առաջին տարբերակը պետք է լինի՝ խորհուրդ տալ շրջանցել տվյալ օբյեկտը և փորձել գտնել ժամանակավոր աշխատանքների համար ավելի հարմար վայր,
- Եթե ազդեցությունից հնարավոր չէ խուսափել, ապա պետք է իրականացվի հետազոտության 2-րդ փուլը (գնահատում)՝ թաղված մնացորդների բնույթն ու կարևորությունը պարզելու համար,
- Եթե պարզվի, որ մնացորդները չափավորից բարձր հնագիտական նշանակություն ունեն, ապա պետք է իրականացվի 3-րդ փուլի միջոցառումը (Նախատեսվող խորությամբ հնագիտական պեղումներ Նախատեսվող ազդակիր տարածքում),
- Եթե ազդակիր տարածքում հնագիտական օբյեկտի առկայության հավանականություն կա, բայց դա հստակ չէ, ապա պետք է իրականացվի 2-րդ փուլը (գնահատում): Եական նշանակություն ունեցող հնագիտական մնացորդների հայտնաբերման դեպքում կպահանջվի մեղմացման միջոցառման 3-րդ փուլի (պեղումների) իրականացում:

Աղյուսակ 6 Գնահատման, մոնիթորինգի և մանրամասն մոդելավորման (Նյութական/Ֆիզիկական մշակութային ժառանգություն) ենթակա օբյեկտների մեղմացման միջոցառումներ

Օբյեկտի անվանումը	Տղգ. N	Նկարագրություն	Ազդեցություն	Մեղմացման միջոցառում	Project Area
Հնարավոր դամբարան	3	Դամբարանային կառույց կամ դամբարան հիշեցնող քարակույտ փոքրիկ ձորակի աջ կողմում	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում  Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ)  <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի գտնվելու վայրը որոշելու նպատակով</li> <li>• 5 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul>	1
Պաշտամունքային կառույց	17	Կլորաձև ցանկապատ բազալտային ստրուկտուրայի շուրջ: Ժամանակաշրջանն ու նշանակությունը անորոշ են: Հավանաբար ծիսական նշանակություն ունի:	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ) <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25մ է)</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում. Նաև - Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և - Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ	2
Պաշտամունքային կառույց	19	Կլորաձև ներփակված տարածք բազալտային լավայից առաջացած	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ	Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով	2

		բնական բլրի գագաթի շուրջը: Ժամանակաշրջանն ու նշանակությունը անորոշ են: Հավանաբար ծիսական նշանակություն ունի: Հնարավոր է նաև, այս օբյեկտում կա թաքնված դամբարան:	հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ) <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25մ է)</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում. - Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և - Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ	
Ներփակված տարածք	55	Ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը, հավանաբար, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:	Ենթակայանի և պահեստային տարածքների տեղադրում, որի արդյունքում, հավանաբար, ամբողջությամբ կհեռացվի օբյեկտի մի հատվածը/դրա հետ կապված ներփակված տարածքները:	Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում Չհնարարական բնույթի հետազոտություն՝ առկա հնագիտական մնացորդների բնույթը, ծավալները և նշանակությունը պատշաճ կերպով բացահայտելու և հասկանալու համար: <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշանների տեղադրում օբյեկտի պարագծով՝ յուրաքանչյուր 10 մետրի վրա՝ նախքան մեղմացման աշխատանքները կատարելը, որոնք կրկին տեղադրվում են այդ աշխատանքների ավարտից հետո՝ շահագործման փուլում օբյեկտի տեղորոշման նպատակով:</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> Նաև - Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը - Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ	3
Ներփակված տարածք	66	Ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է փոքր բլրի հյուսիսային լանջին: Այն, ըստ երևույթին, կապված է	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է	Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ) <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց</li> </ul>	4

		հարևանությամբ գտնվող որսադարանի հետ:	անմիջապես հարևանությամբ	ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի տեղորոշման նպատակով <ul style="list-style-type: none"> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը, և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	
Ներփակված տարածք	79	Բազալտե մեծ բլուկներից կազմված՝ ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է Նախորդ միավորի (No.182) հարևանությամբ: Այն, ըստ երևույթին, կապված է հարևանությամբ գտնվող որսադարանի պատաշարի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ) <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի տեղորոշման նպատակով</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	3
Ներփակված տարածք	87	Բազալտե մեծ բլուկներից կազմված՝ ներփակված տարածք հիշեցնող խոշոր, կլորավուն կառույց, որը գտնվում է Նախորդ միավորի (No.200) հարևանությամբ: Այն, ըստ երևույթին, կապված է	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ) <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի տեղորոշման նպատակով</li> </ul>	5

		հարևանությամբ գտնվող որսադարանի պատաշարի հետ: Ժամանակաշրջանն անորոշ է:		<ul style="list-style-type: none"> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը, և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	
Վանակատե իրերի կուտակումներ	89	Վանակատե իրերի կուտակումներ սահմանափակ տարածքում, որոնք պատկանում են նեոլիթ-էնեոլիթի դարաշրջանին և բրոնզե դարին:	ՖՎ համակարգը հատում է օբյեկտը, իսկ հենասյունը գտնվում է անմիջապես հարևանությամբ	<p>Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում</p> <p>Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի տեղորոշման նպատակով</li> <li>• 5 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	5
Ներփակված տարածք	166	Ներփակված տարածք: Ժամանակաշրջանն ու նշանակությունը հայտնի չեն: Համակարգը, հավանաբար, արտավայրային լանդշաֆտի տարր է:	Մեծ թվով ՖՎ համակարգեր և հենասյուններ հատում են օբյեկտը	<p>Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում</p> <p>Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշանների տեղադրում օբյեկտի պարագծով՝ յուրաքանչյուր 10 մետրի վրա՝ նախքան մեղմացման աշխատանքները կատարելը, որոնք կրկին տեղադրվում են այդ աշխատանքների ավարտից հետո՝ շահագործման փուլում օբյեկտի տեղորոշման նպատակով:</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին</li> </ul>	6

				<p>տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</p> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	
Ներփակված տարածք	202	Ներփակված մեծ տարածք, որը, հնարավոր է, դեպի ավելի հյուսիս-արևելք բնակավայրի մաս է կազմում:	Մեծ թվով \$Կ համակարգեր և հենասյուներ հատում են օբյեկտը	<p>Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում</p> <p>Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշանների տեղադրում օբյեկտի պարագծով՝ յուրաքանչյուր 10 մետրի վրա՝ նախքան մեղմացման աշխատանքները կատարելը, որոնք կրկին տեղադրվում են այդ աշխատանքների ավարտից հետո՝ շահագործման փուլում օբյեկտի տեղորոշման նպատակով:</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul>	6

### 5.3.4 Պահանջների ամփոփում

Մեղմացման միջոցառումների պահանջները կարելի է ընդհանուր առմամբ ամփոփել հետևյալ կերպ.

- i) Մինչ շինարարությունը ներկայացվող պահանջներ (*առաջին փուլ` 2023թ վերջ, 2024թ. սկիզբ*)
  - o Գնահատում
  - o Մշակութային ժառանգության վերգետնյա օբյեկտի ֆոտոգրամետրիա` ա) բարձր որակի, ամբողջ տարածքի նկարահանում, և բ) կոնկրետ 10 օբյեկտների մանրակրկիտ ֆոտոգրամետրիա (տեղական կարգավորող մարմնի հատուկ պահանջ)
  - o Ստորգետնյա հնագիտական օբյեկտի համար նախատեսվող մեղմացման միջոցառում (անհրաժեշտության դեպքում պեղումների միջոցով)
  - o Տրանսպորտային միջոցների կառավարման պլան
  - o Ցանկապատերի, ցուցանակների տեղադրում և բուժերային գոտիների սահմանում
  
- ii) Շինարարության ընթացքում (*երկրորդ փուլ` 2024թ. սկիզբ/կեսեր*)
  - o Ստորգետնյա հնագիտական օբյեկտի համար նախատեսվող մեղմացման միջոցառում (աշխատանքների վերահսկման միջոցով)
  - o Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի կիրառում
  - o Վերգետնյա օբյեկտների համար նախատեսվող մեղմացման միջոցառում (մերձատար ճանապարհների, ՖՎ վահանակների հենասյունների և նախագծի փոփոխությունների նախագծման և կառավարման միջոցով)

Մշակութային ժառանգության պահպանության/մեղմացման միջոցառումների կազմակերպումը ներառում է Ընկերության/շահառուի, կարգավորող մարմնի, ՄԺԱԴ-ի, ՆԳՇ կապալառուի, հնագիտական աշխատանքների կապալառուի մասնակցությունը (տե՛ս Աղյուսակ 2. Ներգրավված կողմերի (Ընկերություն, կարգավորող մարմիններ և կապալառուներ) միջև ընդհանուր աշխատանքային պարտականությունները): Աշխատանքները կկազմակերպվեն 3-րդ բաժնում ներկայացված ընթացակարգով և կստորագրվեն յուրաքանչյուր փուլի ավարտին` մշակույթի նախարարության պահանջներին համապատասխան (օր.` Ծրագրի յուրաքանչյուր տեղամասում շինարարության ավարտից հետո):

## 5.4 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐ

### 5.4.1 Գնահատման աշխատանքներ հետազոտություններից հետո

Հետազոտությունից հետո գնահատման աշխատանքները մեղմացման միջոցառումների անբաժանելի մասն են կազմում: Դրանք ներառում են մեղմացման աշխատանքների (վերահսկողություն, գնահատում, պեղումներ, լուսանկարահանում և այլն) վերլուծություն և, անհրաժեշտության դեպքում, դրանց արդյունքների հրապարակում: Ժամանակացույցը և ներկայացվող կոնկրետ տվյալները կհամաձայնեցվեն համապատասխան կողմերի, այդ թվում` հնագիտական աշխատանքների կապալառուի, ՄԺԴ-ի, ՄԺԱԴ-ի և մշակույթի նախարարության հետ:



Հնագիտական հետազոտությունների յուրաքանչյուր փուլից հետո հնագիտական աշխատանքների կապալառուն կկազմի տվյալ աշխատանքի համար պատրաստված մեթոդաբանության համաձայն հաշվետվություն, որը, որպես կանոն, կներառի.

- Ներածություն՝ ներկայացնելով Ծրագրի տարածքում հետազոտական աշխատանքների վիճակը, նախկինում կատարված հնագիտական աշխատանքները և աշխատանքների բնույթը,
- Հնագիտական գտածոների (ըստ խրամափոսերի) ամփոփ նկարագրություն,
- Գտածոների քանակական և որակական ամփոփում՝ ըստ նյութի, խրամափոսի և շերտագրական միավորի,
- Գտածոների նշանակության վերաբերյալ նախնական եզրակացությունների վերաբերյալ քննարկում,
- Եզրակացություններ և առաջարկություններ, ներառյալ ցանկացած լրացուցիչ վերլուծության անհրաժեշտությունը,
- Հնագիտական աշխատանքների ընթացքում հայտնաբերված նյութերի երկարաժամկետ փաստագրական և ֆիզիկական արխիվի գտնվելու վայրի մասին տեղեկությունների ներկայացում,
- Սխեմաներ (ներառյալ տեղանքի հատակագծերը, որոնք ցույց են տալիս խրամափոսերի տեղադրությունը շրջակա ռելիեֆի և Ծրագրի տարրերի նկատմամբ), կտրվածքներ և լուսանկարներ

Աշխատանքների ավարտից հետո հնագիտական աշխատանքների կապալառուի կողմից ողջամիտ ժամկետում (ոչ ավել, քան 6 ամսվա ընթացքում) կկազմվի համապարփակ տեխնիկական հաշվետվություն, որը կներկայացվի ՄԺՊ-ի և ՄԺԱՊ-ի ուսումնասիրմանը/ դիտողությունների ներկայացմանը, և համապատասխան փոփոխություններից հետո կներկայացվի կարգավորող մարմինների հաստատմանը:

#### 5.4.2 Գիտական վերլուծություն

Մշակութային ժառանգության կառավարման սույն պլանի կիրառման միջոցով հնագիտական տարրերի և օբյեկտների պատշաճ փաստագրումն ապահովելու նպատակով ծախսված ռեսուրսները լավագույնս օգտագործելու համար անհրաժեշտ է իրականացնել Ծրագրի իրականացման ընթացքում իրականացված հետազոտությունների արդյունքում ստացված նյութերի առնվազն նվազագույն մակարդակի վերլուծություն, որը կներառի հետևյալը.

- Գտածոների յուրաքանչյուր կատեգորիայի (կավե, քարե, բնապահպանական ապացույցներ, մարդու և կենդանիների ոսկորներ),
- Առանցքային նշանակության վայրերից վերցված նմուշների գիտական թվագրում, որոնք թույլ կտան ընդհանուր պատկերացում կազմել օբյեկտի ժամանակակազրության մասին

Այս նյութերի ամբողջական վերլուծությունը պետք է իրականացվի շինարարության փուլի ավարտից հետո, որպեսզի այդ նյութերի հավաքումը յնարավոր լինի իրականացնել մեկ փուլով:

#### 5.4.3 Հրապարակում և տարածում

Արդյունքների հրապարակումն ու տարածումը մեղմացման միջոցառումների անբաժանելի մասն են կազմում: Հրապարակման վերաբերյալ առաջարկությունները կներկայացվեն ՄԺԿՊ-ի շրջանակներում իրականացվող հետազոտությունների նախնական հաշվետվություններում:

Հրապարակման անհրաժեշտությունը պարզելու պարագայում շինարարական փուլի ավարտից հետո պետք է մշակվի հրապարակման ամփոփ նախագիծ, որը կսահմանի լրացուցիչ վերլուծության անհրաժեշտությունը, հրապարակման ձևաչափն ու բովանդակությունը, հրապարակողների անունները և ծրագիրը:

#### 5.4.4 Արխիվներ, պահպանում և տիրապետում

Արխիվների (արդյունքների) պահպանումը նույնպես մեղմացման միջոցառումների անբաժանելի մասն է: Ազդեցությունների մեղմացմանն ուղղված աշխատանքների արդյունքների արխիվացման և պահպանման պահանջները կներկայացվեն Ծրագրի իրականացման սկզբում և կհամաձայնեցվեն ՄԺԿՊ-ի շրջանակներում:

Պեղումների ընթացքում հայտնաբերված բոլոր շարժական մշակութային և բնական արժեքները պետք է փոխանցվեն պեղումների ավարտից հետո պատվիրատուի կողմից ներկայացվող համապատասխան պետական կազմակերպությանը:

Պատվիրատուն պարտավոր է տրամադրել պեղումների ընթացքում նշանակված հնագիտական աշխատանքների կապալառուին անհրաժեշտ աջակցությունն ու միջոցները (ներառյալ մշակութային օբյեկտների համար նախատեսված պահոցի անվտանգությունը)՝ մշակութային արժեքները փրկելու և պաշտպանելու համար:

Կապ կհաստատվի նախատեսված ընդունող թանգարանի կամ այլ պահոցի հետ, և նյութերի արխիվացման կարգը մանրամասն նկարագրված կլինեն Ծրագրի աշխատանքների նախագծում կամ մասնագրերում:


#### 5.5 ՊԱՏԱՀԱԿԱՆ ՉՏԱԾՈՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՊԳԿԸ-ի նպատակներն են.

- Սահմանել Ծրագրի բոլոր տեղամասերում (ներառյալ այն տարածքներում, որտեղ պահանջվում է աշխատանքների վերահսկողություն, տե՛ս Բաժին 5.3) պատահական գտածոների պատշաճ կառավարման կարգը՝ մինևույն ժամանակ նվազագույնի հասցնելով շինարարության ժամանակացույցի խախտումները,
- Ապահովել պատահական գտածոների կառավարման համաձայնեցված և հետևողական մոտեցում, որպեսզի կապալառուն ընդունի և կատարի պահանջները, և
- Ապահովել Հայաստանի համապատասխան օրենքներին և կանոնակարգերին և այլ պահանջներին համապատասխանությունը (տե՛ս Բաժին 2.1):

#### **Քայլ առ քայլ գործընթաց**

Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ հիմնական քայլերը ներկայացված են ստորև գծապատկերում: Լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են հաջորդող բաժիններում:



Նկար 18 Պատահական գտածոների կառավարման ընթացակարգ. գործընթացի սխեմա

**Քայլ 1. Հայտնաբերում**

Եթե հայտնաբերվում է մշակութային ժառանգության հավանական օբյեկտ կամ արտեֆակտ.

- ՆԳՇ կապալառուի հնագիտական հարցերով վերահսկիչը պարտավոր է անմիջապես դադարեցնել բոլոր աշխատանքները օբյեկտից տասը մետր շառավղով և գտածոյի մասին տեղեկացնի գլխավոր հնագետին: Գլխավոր հնագետը կապվում է ՆԳՇ կապալառուի շինարարական և բնապահպանական աշխատանքների ղեկավարներին և ՄԺՊ-ին,
- Վերահսկիչները պետք է նկարագրեն գտածոն և փոխանցեն դրան վերաբերող ցանկացած լուսանկար/տեղեկատվություն,
- ՆԳՇ կապալառուի բնապահպանական աշխատանքների ղեկավարը կտեղեկացնի ՆԳՇ կապալառուի ծրագրի ղեկավարին:

**Քայլ 2. Չնահատում**

- Հնագիտական հարցերի վերահսկիչը կփաստագրի նյութ(եր)ը և կպատրաստի օբյեկտի նշանակության մասին հաշվետվություն, որը կստուգվի գլխավոր հնագետի կողմից:
- Չնահատումը կպարունակի հիմնական տեղեկատվությունը օբյեկտի մասին (ԳՏՀ (GPS) կոորդինատները, որոնք ցույց են տալիս օբյեկտի սահմանները (ուրվագծային պլան), օբյեկտի և դրա անմիջական շրջակայքի թվային լուսանկարները, ցանկացած անհրաժեշտ չափումներ և տեղում նշումներ, ինչպես նաև օբյեկտի նշանակության գնահատումը):
- Այս տեղեկատվությունը կավելացվի Ծրագրի կենդանի ժառանգության տվյալների բազայում (տե՛ս ստորև Բաժին 8-ը):

### **Քայլ 3. Ծանուցում**

- Հնագիտական հարցերի վերահսկիչի կողմից կազմված և գլխավոր հնագետի կողմից ստուգված և հաստատված հաշվետվությունը կփոխանցվի ՄԺԴ-ին, ով այնուհետև կտեղեկացնի մշակույթի նախարարությունը և ներկայացնում իր վերջնական հաշվետվությունն ու նշանակության գնահատումը: Այս գործողությունը պետք է իրականացվի գտածոյի հայտնաբերումից հետո 48 ժամվա ընթացքում:
- Նախկինում չբացահայտված դամբանաբլուրների և գերեզմանների (մարդու մասունքների) հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է տեղյակ պահել տեղի ոստիկանությանը:

### **Քայլ 4. Որոշում**

- ՄԺԴ-ն պարտավոր է օրենքով սահմանված կարգով կազմակերպել մշակութային ժառանգության օբյեկտի ստուգում մշակույթի նախարարության ներկայացուցչի կողմից:
- Եթե նախարարության ներկայացուցիչը որոշի, որ պատահական գտածոն հնագիտական կամ մշակութային ժառանգության արժեք չի ներկայացնում, ապա նա գրավոր հաստատում է ներկայացնում պարզաբանելով այդ որոշման պատճառները: Որոշման պատճենն ուղարկվում է կապալառուի շինարարական և բնապահպանական աշխատանքների ղեկավարներին և ՄԺԴ-ին:
- Կապալառուի շինարարական աշխատանքների ղեկավարը կթույլատրի օբյեկտի պաշտպանության միջոցների հանումը, կտեղեկացնի համապատասխան բաժնի ներկայացուցիչներին, և աշխատանքը կարող է շարունակվել:

### **Քայլ 5. Կառավարում**

- Եթե հավանական պատահակն գտածոն հնագիտական կամ մշակութային ժառանգության օբյեկտ է, ապա ՄԺԴ-ն կպատրաստի հետազոտության մեթոդներն ու համապատասխան փաստաթղթերը և կհամաձայնեցնի դրանք մշակույթի նախարարության հետ,
- Լրացուցիչ հնագիտական գնահատման և մեղմացման աշխատանքների անհրաժեշտության դեպքում ՄԺԴ-ն կպատրաստի աշխատանքների կատարման նախագիծ և կներկայացնի մշակույթի նախարարության հաստատմանը: Սա կներառի պատահական գտածոյի գտնվելու վայրը, բնույթը, ամսաթիվը, մասշտաբները և նշանակությունը, ինչպես նաև լուսանկարներ և տեղադիրքի քարտեզը և օբյեկտի տարածման չափը, նախատեսվող որևէ հնագիտական հետազոտության գտնվելու վայրը և մասշտաբները:
- Հնագիտական աշխատանքների կապալառուին կպատվիրվի իրականացնել համաձայնեցված աշխատանքների նախագծով սահմանված հետազոտությունները:

### **Քայլ 5. Մեղմացում**

- Հնագիտական աշխատանքների կապալառուին կպատվիրվի իրականացնել համաձայնեցված աշխատանքների նախագծով սահմանված հետազոտությունները:
- Եթե հետազոտությունները ներառեն գնահատողական հետազոտություն, որը նախատեսված է պարզելու թաղված հնագիտական մնացորդների նշանակությունը, բնույթն ու մասշտաբները, ապա կկազմվի նախնական հաշվետվություն՝ արդյունքների ամփոփմամբ և մեղմացման միջոցառումների իրականացման վերաբերյալ համապատասխան առաջարկություններով, որը կներկայացվի ՆԳՇ կապալառուին և

ՄԺՊ-ին դաշտային աշխատանքների ավարտից հետո 3 շաբաթվա ընթացքում: Հաշվետվությունը պետք է ներառի իրականացվող ցանկացած աշխատանքի պլանները, բաժինները և լուսանկարները, ինչպես նաև տվյալ օբյեկտի վերլուծության ամսաթիվն ու նշանակությունը:

- Օբյեկտի վրա ազդեցության մեղմացման նպատակով պեղումների անհրաժեշտության դեպքում ՄԺՊ-ի կողմից կկազմվի աշխատանքների կատարման նախագիծ, որը կներկայացնի մշակույթի նախարարության հաստատմանը: Նախագիծը կպարունակի տեղեկություններ օբյեկտի գտնվելու վայրի, բնույթի մասին, դրա հայտնաբերման ամսաթիվը, մասշտաբները և նշանակությունը, կներառի տեղադիրքի քարտեզը և օբյեկտի տարածման չափը՝ ցույց տալով պահանջվող պեղումների մասշտաբներն ու խորությունը: Հնագիտական աշխատանքների կապալառուն պեղումներից ավարտից հետո 3 ամսվա ընթացքում կկազմվի և կներկայացնի դաշտային աշխատանքների արդյունքների հաշվետվություն, եթե այլ բան համաձայնեցված չէ մշակույթի նախարարության հետ: Հաշվետվությունը կներառի բոլոր պեղված խրամափոսերի նկարագրություններն ու գծագրերը, ինչպես նաև հայտնաբերված բոլոր հնագիտական նյութերի քանակական ամփոփագրերը: Այն կներառի նաև վերջնական հրապարակման վերաբերյալ առաջարկություններ:
- Օբյեկտի մասշտաբներն ու կարգավիճակը պետք է թարմացվեն Ծրագրի մշակութային ժառանգության տվյալների բազայում:

#### **Քայլ 6. Աշխատանքների վերսկսում**

- Հնագիտական մեղմացման դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո մշակույթի նախարարությունը գրավոր հաստատում է տարածքում շինարարություն իրականացնելու թույլտվությունը:
- Ընթացակարգի պահանջների չկատարման դեպքում ՆԳՇ կապալառուի ծրագրի ղեկավարը և Ընկերության ԲՍԿ ծրագրի ղեկավարը և/կամ տնօրենը կձեռնարկեն անհրաժեշտ գործողություններ՝ ՊԳԿԸ-ի պահանջների չկատարման պատճառները պարզելու և դրանց կրկնությունը կանխելու համար անհրաժեշտ գործողություններ իրականացնելու նպատակով:

### **5.6 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

ՆԳՇ կապալառուն, գլխավոր հնագետի և ՄԺՊ-ի աջակցությամբ, կմշակի մշակութային ժառանգության իրազեկման ուսումնական նյութերի փաթեթ (որոնք կստուգվեն ՄԺԿ խորհրդատուների կողմից) և կանցկացնի այդ թեմայով դասընթաց:

Դասընթացը կներառի Ծրագրի տեղամասին առնչվող հնագիտական նյութերի հայտնաբերման ընդհանուր պատրաստություն: Դասընթացը հիմնական շեշտը կդնի վիզուալ ցուցադրման վրա (գրաֆիկա, պատկերներ, գծատապկերներ, լուսանկարներ և այլն) և կպարունակի պարզ, հասկանալի ուղերձներ: Մշակութային ժառանգության իրազեկման դասընթացի փաթեթը կներկայացվի ՆԳՇ կապալառուի աշխատակիցներին՝ նախքան աշխատանքներին նրանց մասնակցությունը: Շինհրապարակում աշխատող բոլոր աշխատակիցները կմասնակցեն դասընթացին:

Դասընթացի նպատակները ներառում են.

- Մշակութային ժառանգության օբյեկտների մասին տեղեկացվածության բարձրացում,
- Ինչպե՞ս ճանաչել մշակույթի ժառանգության վայրերը, տարրերը և օբյեկտները,
- Հայաստանի իրավական պահանջների պարզաբանում,

- ՊԳԿ ընթացակարգի և դրա պահանջների մասին ընդհանուր տեղեկություններ,
- Հրահանգներ այն մասին, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկել պատահական գտածոներ հայտնաբերելու կամ դրանց կասկածի դեպքում:

Դասընթացի շրջանակներում կտրամադրվի պարզ տեղեկատու ուղեցույց, որը մանրամասն կներկայացնի հիմնական բաղադրիչները և կարող է օգտագործվել շինհրապարակում, ինչպես նաև շինարարության և շահագործման փուլերում:

Շինարարության մեկնարկից առաջ մի քանի անգամ կիրականացվի ուսուցում՝ համապատասխան բոլոր աշխատակիցների մասնակցությունն ապահովելու համար: Անհրաժեշտ գործողություններին մասնակցելու պատասխանատվությունը վերապահվելու է ՆԳՇ-ին (կվերահսկվի բնապահպանության աշխատանքների ղեկավարի կողմից):

Դասընթացի յուրաքանչյուր մասնակցի համար պետք է լրացվեն դասընթացին մասնակցության գրանցման թերթիկները, իսկ ավարտից հետո դրանք պետք է ստորագրվեն ա) շինարարական աշխատանքների ղեկավարի, բ) բնապահպանական աշխատանքների ղեկավարի և գ) մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուի կողմից:

Մշակութային ժառանգության կառավարման ծրագրի (ներառյալ ՊԳԿԸ) կիրառման պարտավորությունները կփոխանցվեն ՆԳՇ-ին, սակայն կվերահսկվեն ՄԺԴ-ի (Ընկերություն) և Բնապահպանական աշխատանքների ղեկավարի (ՆԳՇ) կողմից:

## 5.7 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հնագիտական աշխատանքների վերահսկիչներն ու գլխավոր հնագետն ամեն ամիս կներկայացնեն հաշվետվություններ իրենց աշխատանքի արդյունքների վերաբերյալ: Դրանք կներկայացվեն Ընկերության Մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուին և մշակութային ժառանգության հարցերով ավագ պատասխանատուին՝ ստուգելու նպատակով, այնուհետև կապալառուին, ՄՖՀ-ների համապատասխան ներկայացուցիչներին և Ծրագիրն իրականացման համար պատասխանատու մարմնին (ՏԿԵՆ): Հաշվետվությունները կներառեն թարմացված տեղեկություններ հետևյալի վերաբերյալ.

- Մշակույթի նախարարության կողմից հաստատված կամ չհաստատված ցանկացած պատահական գտածո՝ լրացված ձևաթղթերով, քարտեզներով և լուսանկարներով,
- Պատահական գտածոների կառավարման ցանկացած կամ բոլոր գործող ընթացակարգերի արդյունքը,
- Նախորդ ամսվա ընթացքում քննակրված կամ համաձայնեցված նախագծի ցանկացած փոփոխություն,
- Ժամանակավոր աշխատանքների ցանկացած փոփոխության կամ լրացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ներառում են նախնական շինարարական գոտուց դուրս լրացուցիչ գոտիների խախտումները, այդ թվում՝ տեխնոլոգիական ճանապարհներ և հողի պահեստավորման տարածքներ (ներառյալ չնախատեսված ազդեցություններ, օրինակ՝ սողանքներ), տեղամասերի համապատասխան քարտեզներով և/կամ օդային լուսանկարներով,
- Կառուցապատվող տարածքների նախագծի ցանկացած փոփոխության վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ այն տարածքների, որտեղ փոփոխություններ են կատարվել մշակութային ժառանգության վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով,

- ԲՍԱԳ-ի, ՄԺԱՊ-ի և/կամ մշակույթի նախախարության հանձնարարականների համաձայն մշակութային ժառանգության կառուցված օբյեկտների պահպանման վերաբերյալ տեղեկություններ,
- Շինարարության ազդեցության գոտուց 300մ շառավղով հայտնաբերված մշակութային ժառանգության օբյեկտների վիճակի հետ կապված ցանկացած խնդրի բացահայտում,
- Մշակութային ժառանգության օբյեկտների ցանկապատման/ցուցանակների տեղադրման վերաբերյալ տեղեկություններ,
- Ծրագրի ազդեցության գոտուց 100մ շառավղով օբյեկտների իրավական պաշտպանության կարգավիճակի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն,
- Վերահսկիչների կողմից հայտնաբերված ցանկացած արտեֆակտի մասին հաղորդում և դրանց պահեստավորման, պահպանման և արխիվացման պլանների հաստատում,
- Կենդանի ժառանգության կառավարման, պահպանման կամ պաշտպանության հետ կապված ցանկացած խնդրի բացահայտում, ներառյալ ոչ նյութական ժառանգության օբյեկտների վիճակը / դրանց հասանելիությունը:

## 5.8 ԱՇԽԱՐՀԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՐԿՎԱՐՈՒՄ

Վերևում մանրամասն նկարագրված ամսական հաշվետվության գործընթացին զուգահեռ ՄԺՊ-ն ՄԺԱՊ-ի հետ համագործակցելով կապահովեն աշխարհատարածական տվյալների բազայի վարումն ու ոչ պակաս, քան շաբաթական կտրվածքով դրա թարմացումը: Դրանք կներառեն հետևյալ շերտերը.

- Մշակութային ժառանգության հայտնի ռեսուրսների գտնվելու վայրը և տարածքը մշտական և ժամանակավոր աշխատանքների ազդեցության գոտուց 100մ շառավղով,
- ճանապարհային նախագծի և դրան առնչվող բոլոր ենթակառուցվածքների/բարեկարգվող տարածքի զբաղեցրած տարածքը,
- Ցանկացած ժամանակավոր աշխատանքների տարածքն ու բնույթը, որոնք ենթադրում են հողերի խախտում (որը ներառում է նյութերի տեղադրում չխախտված տարածքներում, ինչպես նաև հողի բերրի շերտի մակաբացում, պեղումներ և այլն), ներառյալ տեխնոլոգիական ճանապարհներ, հանքեր, հողի պահեստավորման տարածքներ, պայթուցիկների պահեստներ, լցակույտեր,
- Հողերի ցանկացած չնախատեսված/չփաստաթղթավորված խախտումների գտնվելու վայրը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների կաճաններ, սողանքներ և նյութերի թափումը,
- Իրականացվող ցանկացած հնագիտական աշխատանքների գտնվելու վայրը և ծավալները, ներառյալ խրամափոսերի տեղադրությունը,
- Վերահսկողական դիտարկումների կամ ՊԳԿԸ-ի իրականացման արդյունքում հայտնաբերված ցանկացած անսպասելի օբյեկտների/գտածոների/տարրերի գտնվելու վայրը, բնույթը, ծավալները և կարգավիճակը:

Ընկերության, ՆԳՇ կապալառուի, մշակույթի նախարարության, ՏԿԵՆ-ի և ՄՖՅ-ների ներկայացուցիչներին պետք է տրամադրվի այս տվյալների բազայից օգտվելու հնարավորություն ինտերնետային քարտեզի միջոցով: Մշակութային ժառանգության հարցերի ավագ պատասխանատուն կվերահսկի Ծրագրի տվյալների բազայի կառավարումը, որպեսզի այն մշտապես թարմացվի: Նա կվարի նաև Մշակութային ժառանգության կառավարման պլանի շրջանակներում կատարվող աշխատանքների գրանցամատյանը:

Անհրաժեշտության դեպքում և աշխատանքների ավարտից հետո չմշակված աշխարհատարածական տվյալները կփոխանցվեն մշակույթի նախարարությանը:

## 5.9 ԼՐԱՅՈՒՑԻՉ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 5.9.1 Ազդեցությունների թարմացված գնահատում

Եթե շինարարական աշխատանքների ազդեցության գոտին ընդլայնվելով տարածվում է սկզբնական նախագծի մաս չկազմող տարածքների վրա, ապա կապալառուները պետք է ապահովեն, որ մշակութային ժառանգության վրա ցանկացած նման ընդլայնման ազդեցության գնահատում իրականացվի մինչև նախագծի հաստատումը: Ազդեցության այս գնահատումը կարող է իրականացվել ՄԺՊ-ի կողմից: Այն պետք է ներառի հետևյալը.

- Մշակութային ժառանգության հայտնի ռեսուրսների քարտեզի վրա դրվող քարտեզ, որը ցույց կտա ընդլայնման տարածքը,
- Ազդակիր տարածքում հնագիտական օբյեկտների առկայության գրավոր գնահատում, ներառյալ մշակութային ժառանգության ցանկացած ազդակիր ռեսուրսների կարևորության և նախատեսվող ազդեցության մակարդակի դիտարկումը,
- Նախատեսվող ընդլայնման ուղղակի և անուղղակի ազդեցությունների գնահատում,
- Եթե եզրակացություն արվի, որ նախատեսվող ընդլայնումը կազդի կամ հնարավոր է ազդի թաղված հնագիտական խոցելի տարածքների վրա, ապա պետք է առաջարկվի իրականացնել 2-րդ փուլի գնահատումը, որը կհետևի 3-րդ փուլին (մեղմացման միջոցառումների շրջանակներում պեղումներին),
- Եթե կա հավանականություն, որ նախատեսվող ընդլայնումը կարող է ազդել մշակութային ժառանգության կառուցված օբյեկտների վրա, ապա պետք է համապատասխան առաջարկություններ ներկայացվեն, ներառյալ տվյալ տարածքների ցանկապատում և ցուցանակների տեղադրում, պահպանման աշխատանքներ և/կամ վիբրացիայի վերահսկում,
- Եթե կա հավանականություն, որ ընդլայնվող տարածքները կարող են ազդել ոչ նյութական արժեք ներկայացնող հնագիտական օբյեկտների վրա, ապա անհրաժեշտ կլինի խորհրդակցել տեղական համայնքի տուժած բնակիչների հետ և մշակել համապատասխան կառավարման պլան:

### 5.9.2 Արտեֆակտների պահպանում

Հնագիտական նյութերի հայտնաբերման հետ կապված ցանկացած դաշտային աշխատանք կներառի պահպանման, արխիվացման և երկարաժամկետ պահպանման պլան՝ ներառելով հատուկ թանգարանային հավաքածու: Հնագիտական հարցերով վերահսկիչը պարտավոր է ապահովել արտեֆակտների պահպանումը Ծրագրի տեղամասում գտնվող գրասենյակներում հատկացված ապահով վայրում՝ մինչև թանգարանին փոխանցելը:

### 5.9.3 Տեղեկատվության փոխանցում և արխիվացում

Դաշտային աշխատանքների ավարտից հետո մշակութային ժառանգության հարցերի պատասխանատուն, հնագիտական հարցերի վերահսկիչը և «Այգ-1» Ծրագրի տարածքում հնագիտական աշխատանքներ իրականացնող անկախ կապալառու բոլոր հաշվետվությունները և թվային տվյալները կներկայացնեն մշակույթի նախարարություն: Այս տեղեկատվությունը կփոխանցվի նաև համապատասխան այլ շահագրգիռ կողմերին:

### 5.9.4 Ընթացիկ մասնակցություն

2023 թվականի հոկտեմբերին անցկացվեց պաշտոնական խորհրդակցություն մշակույթի նախախարության հետ (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն), որի ժամանակ ներկայացվեց և հաստատվեց Մշակութային ժառանգության կառավարման



պլանը: ՄԺԿՊ-ի մերթոդաբանության և մոտեցման պաշտոնական գրավոր հաստատումը ներկայացվեց 2023թ. հոկտեմբերի վերջին:

Պաշտոնական խորհրդակցություններ են անցկացվում նաև հետևյալ կազմակերպությունների/ՀԿ-ների հետ.

- Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
- ԻԿՕՄՍՍ Հայաստան
- Մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոն
- «Կայուն զբոսաշրջության զարգացումը Հայաստանում» ՀԿ
- Հայաստանում զբոսաշրջության զարգացման հիմնադրամ

խորհրդակցությունների ընթացքում ներկայացվում են ՇՄԱԳ-ի և ՄԺԿՊ-ի պահանջների կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկություններ: Յուրաքանչյուր կարգավորող մարմին և շահագրգիռ կողմ հնարավորություն կունենա բարձրաձայնել ցանկացած մտահոգություն, ներկայացնել իրենց դիտողություններն ու մեկնաբանությունները և/կամ պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

ՄԺԿՊ-ն ներառում է լրացուցիչ տեղեկատվություն կարգավորող մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ մշտական համագործակցության ծրագրի վերաբերյալ, որն անհրաժեշտ է աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ բոլոր կողմերի իրազեկվածությունն ապահովելու համար: Հետագա ներգրավվածությունը ներառում է.

- Ցանկացած «կարևոր նշանակություն ունեցող գտածոների» մասին հաղորդում Պատահական գտածոների կառավարման ընթացակարգի համաձայն
- Մեղմացման միջոցառումների յուրաքանչյուր բաղադրիչի ավարտից հետո արդյունքների ամփոփում և փոխանցում
- Ստացված հնագիտական գտածոների և հաշվետվությունների արդյունքների (ինչպես նաև պահոցի գտնվելու վայրի և հերթական համարի վերաբերյալ տեղեկատվության) հաստատում և փոխանցում:



## 6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

---

- 1 Օբյեկտների տեղեկագրի նյութեր
- 2 Քարտեզներ
- 3 Օբյեկտներին բնորոշ մեղմացման միջոցառումների նկարագիր



## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱԳԻՐ



QUERCUS HERITAGE

## ՀԱՎԵԼԿԱԾ 2 . ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏԵԶ

---



QUERCUS HERITAGE

### ՀԱՎԵԼՎԱԾ 3 . ՕԲՅԵԿՏԻՆ ԲՆՈՐՈՇ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

---

Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿԴ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
1	Որմնափակ (ներփակված) տարածք	Ներփակված տարածք հիշեցնող հիշեցնող կլորավուն մեծ կառույց, որը, հնարավոր է, կապված է հարևանությամբ գտնվող ամբողջական որսադարանի հետ: Ժամանակաշրջանը հայտնի չէ:	Միջին-ցածր	Անշան	Անշան	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում \$ոտոգրամետորիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բարձր տեսանելիության (անդրադարձիչ ներկով) նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (երես կառուցապատվող տարածքից տարածությունը մինչև 25 մ է)</li> <li>• 2մ բուֆերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում.</p> <p>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</p> <p>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</p>	1
2	Պատաշարի հատվածներ	Պարզ շարվածքով երկար պատաշար: Նշանակությունը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ որսադարանի (բայթ) կառույցների հատվածներ են, որոնք	Շատ ցածր	Միջին	Փոքր	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում \$ոտոգրամետորիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ցանկապատի կարիք չկա (պայմանով, որ տրանսպորտային միջոցների կառավարման պլանով ազդեցությունը նվազագույնի է հասցվում)</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով</p>	1

Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿԴ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
		տարածքում հողաբարելավումների արդյունքում կորցրել են իրենց ամբողջականությունը (ամբողջական տեսքը):				<p>մշտադիտարկում.</p> <p>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</p> <p>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի վիզուալ զննումներ</p> <p>Պատի կամ պատաշարի հատվածները կամ քարազանգվածը տեղափոխելիս Նյութի ծավալն ու քանակն պետք է նվազագույնի հասցնել՝ ազդակիր ցածրադիր պատաշարը կամ քարազանգվածի տարածքը պատելով պաշտպանիչ տեքստիլ շերտով:</p>	
3	Հնարավոր դամբարան	Դամբարանային կառույց կամ դամբարան հիշեցնող քարակույտ փոքրիկ ձորակի աջ կողմում	Միջին-ցածր	Միջին	Չափավոր	<p>Ֆոտոգրամետրիայի և մոդելավորման միջոցով բարձր մակարդակի և մանրամասն փաստագրում և գրանցում</p> <p>Տարածքում իրականացվող աշխատանքների վերահսկում օբյեկտի սահմաններում կամ դրա անմիջական հարևանությամբ (5 մ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մինչև ազդեցությունների մեղմման աշխատանքների իրականացումը տեղադրվում են պլաստիկ ցանկապատներ, որոնք կրկին տեղադրվում են դրանց ավարտից հետո՝ շահագործման փուլի ընթացքում օբյեկտի գտնվելու վայրը որոշելու նպատակով</li> <li>• 5 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին</li> </ul>	1

Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿԴ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
						<p>տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</p> <p>Նաև</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ.</li> </ul>	
4	Պատաշարի հատված	Պարզ շարվածքով երկար պատաշարի մի հատված: Նշանակությունը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ ամբողջական որսադարանների հատվածներ են, որոնք տարածքում հողաբարելավումների արդյունքում կորցրել են իրենց ամբողջական տեսքը:	Շատ ցածր	Միջին	Փոքր	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ցանկապատի կարիք չկա (պայմանով, որ տրանսպորտային միջոցների կառավարման պլանով ազդեցությունը նվազագույնի է հասցվում)</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի վիզուալ զննումներ</li> </ul> <p>Պատի կամ պատաշարի հատվածները կամ բարազանգվածը տեղափոխելիս Նյութի ծավալն ու</p>	1



Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿԴ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
						<p>բանակն պետք է նվազագույնի հասցնել՝ ազդակիր ցածրադիր պատաշարը կամ բարազանգվածի տարածքը պատելով պաշտպանիչ տեքստիլ շերտով:</p>	
5	Ներփակված տարածք	<p>Երկար պատաշարի մեջ ներկառուցված կլորավուն կառույց: Հավանաբար ամբողջական որսադարանի ներփակված տարածքն է:</p>	Միջին-ցածր	Աննշան	Աննշան	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինիրապարակից հեռավորությունը մինչև 25 մ է)</li> <li>• 2 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ, որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում.</p> <p>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</p> <p>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</p>	Ծրագրի ազդեցության գոտու սահմաններում չի գտնվում
6	Պատաշարի հատված	Փոքրիկ բլրի լանջին փռված պարզ շարվածքով երկար	Շատ ցածր	Միջին	Փոքր	Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով	1

Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿԴ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
		<p>պատաշարի մի հատված:</p> <p>Նշանակությունը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ ամբողջական որսադարանի մաս է, որը տարածքում հողաբարելավումների արդյունքում կորցրել է իր ամբողջական տեսքը:</p>				<ul style="list-style-type: none"> <li>• Ցանկապատի կարիք չկա (պայմանով, որ տրանսպորտային միջոցների կառավարման պլանով ազդեցությունը նվազագույնի է հասցվում)</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենաայան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</li> <li>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</li> </ul> <p>Պատի կամ պատաշարի հատվածները կամ քարազանգվածը տեղափոխելիս Նյութի ծավալն ու քանակն պետք է նվազագույնի հասցնել՝ ազդակիր ցածրադիր պատաշարը կամ քարազանգվածի տարածքը պատելով պաշտպանիչ տեքստիլ շերտով:</p>	
7	Հնարավոր դամբարան	<p>Դամբարանային կառույց կամ դամբարան հիշեցնող քարակույտ բլրի լանջին գտնվող նմանատիպ կառույցների խմբում: Ժամանակաշրջանը հայտնի չէ</p>	Միջին-ցածր	Աննշան	Աննշան	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անդրադարձիչ ցանկապատ (եթե շինհրապարակից հեռավորությունը մինչև 25մ է)</li> <li>• 3 մ բուժերային գոտի</li> <li>• Մշակութային ժառանգության օբյեկտի առկայության (և դրա տեսակի) մասին տեղեկացնող ցուցանակներ առնվազն երկու տեղ,</li> </ul>	1

Օբյեկտի համարը	Օբյեկտի տեսակը	Նկարագրություն	Չգայունություն	Ազդեցության չափը (մինչև մեղմացումը)	Ազդեցության հետեւանքը (մինչև մեղմացումը)	ՄԺԿ-ի մեղմացման միջոցառումներ	Ծրագրի տեղամաս
						որոնք տեսանելի են առնվազն 5 մ հեռավորությունից	
8	Պատաշարի հատվածներ	Տեղական ռելիեֆի և բլրալանջերի բարձրադիր մասերում պահպանված պատաշար: Հավանաբար խոշոր ամբողջական որսադարանի մասերն են, որոնք պահպանվել են տարածքի ինտենսիվ հողաբարելավումից հետո:	Շատ ցածր	Միջին	Փոքր	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>Ցանկապատի կարիք չկա (պայմանով, որ տրանսպորտային միջոցների կառավարման պլանով ազդեցությունը նվազագույնի է հասցվում)</li> </ul> <p>Շինարարության ոչ հնագիտական նպատակներով մշտադիտարկում.</p> <p>- Նվազագույնի հասցնել ազդեցությունը՝ վերահսկելով հենասյան ճշգրիտ տեղադրությունը՝ ուղղակի ազդեցությունից խուսափելու նախապատվությամբ, և</p> <p>- Կատարել շինարարական աշխատանքների իրականացման վայրի անմիջական հարևանությամբ գտնվող (10մ կամ սահմանված հեռավորությամբ) ցանկացած վերգետնյա օբյեկտի դիտազննումներ</p> <p>Պատի կամ պատաշարի հատվածները կամ բարազանգվածը տեղափոխելիս նյութի ծավալն ու քանակն պետք է նվազագույնի հասցնել՝ ազդակիր ցածրադիր պատաշարը կամ բարազանգվածի տարածքը պատելով պաշտպանիչ տեքստիլ շերտով:</p>	1
9	Կառույց (շինություն)	Փոքր բլրի լանջին գտնվող շրջանաձև և ուղղագիծ պատերից բաղկացած կառույց: Նշանակությունը և	Միջին-ցածր	Աննշան	Աննշան	<p>Մինչ շինարարությունը. Փաստագրում և գրանցում ֆոտոգրամետրիայի (բարձր մակարդակի) միջոցով</p> <ul style="list-style-type: none"> <li>Անդրադարձիչ նշաններ յուրաքանչյուր 10 մ-ի վրա՝ օբյեկտի պարագծով (եթե շինիրապարակից</li> </ul>	1

